



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2774
24575

346

85
Q-56

0245 15/12/38

2011

պ Զիւն Կոմիտէի
պ
85
Ձ-56
ՈՋՐԱԳՈՐԾԻ

Ը Ն Տ Ա Ն Ի Ք

(„La morte civile“ P. Giakometti.)

ԴՐԱՄԱ 5 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆԻ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

2003

1891

Է. Ֆ. ՏԷՐ-ԳՐԻԳՐԵԱՆԵՅԻ ՏԳԱՐԱԿ:

Ե Ր Ե Ի Ա Ն

1002
6219
7

4470070720

4 4 5 3 2 0 9

1891

1891

Дозволено Цензурою. Тифлисъ 15-го Апрѣля
1891 года.

1891

1891

1891

1891

1891

Къ представленію дозволено. Тифлисъ, 27
Апрѣля 1891 года.

4470070720

1891

1891

1891

1891

1891

1891

1891

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Կօրրադօ: (Ոճրագործ):

Արրիգօ Պալմիերի, բժիշկ:

Զիօանինօ Բոլլօ, մօնսինիօր: (Վանահայր):

Դօն Ֆերնանդօ: (Սարա Էդօր որդին):

Գաէտանօ: (Վանահան սպասար):

Բօղալիա: (Կօրրադօյն կինը):

Էմմա: (Կօրրադօյն և Բօղալիայն Արա-աղջիկը):

Ագատա: (Լրտես, աղախնի պաշտօնում, Պալմիերին պանը):

Անցքը պատահում է Կալաբրիայի խորքերում,
Բոլրօնների տիրապետութեան ժամանակ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ



Եսարանը ներկայացնում է
բժշկի տան դահլիճը, շատ
յարմար և համեստ կա-
հաւորուած: Խորքում դու-
ռը կողմնակի երեք դռներ տանում են՝
դէպի պարտէզ, գրադարան և միւս
սենեակները:

ՏԵՍԻՆ 1.

ԴՕՆ ՖԵՐՆԱՆԴՕ ԵՒ ԱԳԱՏԱ

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ուրեմն ինձ իսկոյն ճանաչեցիր:

ԱԳԱՏԱ

Իսկոյն. ինչպէս չճանաչեմ, ես ձեր դ-
եակն եմ: Ես ձեզ ծիծ եմ տուել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Դու լաւն այն է ասես, որ ես արդէն 15 տարեկան էի, երբ հօր եղբայրս ինձ այստեղից ուղարկեց Կատանիա ուսանելու և որ...

ԱԳԱՏԱ

Է, չէ որ այն օրուանից յետոյ շատ չար ու բարի ենք տեսել, շատ փոփոխութիւններ են եղել: Միթէ չէ՞ք տեսնում, Դօն Ֆերնանդօ, ես ինչպէս ծերացել եմ, իսկ դուք նոյն ջահելն էք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այդ է պատճառը որ զարմացար և բերանըդ բաց մնաց, երբ տեսար ինձ:

ԱԳԱՏԱ

Ախ, ո՛չ: Ես զարմացայ, երբ տեսայ ձեզ դեռ աշխարհական:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ա, հասկանում եմ: Դու, իմ բարի գայեակըս, յոյս ունէիր տեսնել ինձ եպիսկոպոս կամ կարդինալ: Այնպէս չէ՞:

ԱԳԱՏԱ

Իսկ ես ո՞րքան եմ աղօթել դորա համար սուրբ Զէնարօյին:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Շնորհակալութիւն, որ նեղութիւն ես կըրէի: Փառք այդ սուրբին, որ չի լսել քո աղօթքը:

ԱԳԱՏԱ

Ախ, Աստուած իմ: Այդ ինչ մտքեր են:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ազնիւ մարդու մտքեր են, սիրելիս: Ամեն մի արհեստի համար հարկաւոր է սէր, ձրգտում: Հակառակ դէպքում շատ վատ կլինէր. ասածս զուտ ճշմարտութիւն է, որ մօնսինիօրը, իմ հօրեղբայրս, ցանկացաւ հոգեւոր կոչման մէջ տեսնել ինձ և Կատանիայից ուղարկեց ինձ Հռովմ իւր եղբայր կարդինալի մօտ. բայց նա իւր հաշուի մէջ սխալուեց. ես նրա փողերը մխտում էի լաւ, ուսանում էի քիչ, զուարճանում էի շատ, գոթութիւններ էի անում աւելի շատ և վերադարձայ հօրեղբօրս մօտ հազիւ քրիստոնեայ, — և այդ էլ դեռ մեծ հրաշք է:

ԱԳԱՏԱ

Աստուած իմ, ինչ եմ լսում ես: Այդպէ՞ս եմ ես ձեզ մեծացրել: Միթէ միշտ չե՞մ խաչակնքել ձեզ ամեն փորձանքների դէմ. միթէ ես չե՞մ քաշ արել ձեր կուրծքին խաչ ու ամեն տեսակ սրբութիւն: Ախ, ես անբախդ եմ: Եթէ մօնսինիօրը լսէր, ինչ որ ասացիք, այ թէ կըղայրանար: Դուք գոնէ նորա մօտ աւելի խոհեմ եղէք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Է, Հռովմում լինելս իզուր չէր. այնտեղ բաւականաչափ երեսպաշտութիւն ու ստութիւն եմ սովորել... Ես հէնց այստեղ էլ ծառայում եմ մօնսինիօրին որպէս խուղարկու. տեսնում

ես, ես դեռ լաւ կաթողիկ եմ:

ԱԳԱՏԱ

Խուզարկո՞ւ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այս խուզարկութիւնը, որի համար եկեալ եմ, պէտք է ասած, անմեղ է և շատ դուրեկան, որովհետեւ գործը մի կընոջ է վերաբերում:

ԱԳԱՏԱ

Մի կնոջ: Ա՛խ երեւի... բայց կարող է այդպէս լինել... Թէեւ այդ տեսակ յանձնարարութիւնը դժուար թէ ձեզ յարմար լինի... բայց չէ, մօնսինիօրը սխալուել չէ կարող: Իսկ ես կարծում էի թէ դուք այստեղ նորա համար էք եկել, որ տեսնուէիք բժ. Պալմիերի հետ, որի հետ անց էք կացրել ձեր երեխայութեան ժամանակները և որ ինձ էլ տեսնէիք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ասե՛նք այդպէս է. շատ ուրախ եմ թէ քեզ և թէ Արրիգոյին տեսնելու, բայց միևնոյն ժամանակ այդ գաղտնիքով ծածկուած տիկինը, որին ինչպէս լսում եմ հօրեղբորիցս, բժիշկը դուրս է բերել Կատանիա քաղաքից և թագըրնում է նրան Կալաբրիայի խորքերում: Ինձ ամենից շատ է հետաքրքրում: Ո՞վ է նա: Ինչպէս է նորա անունը:

ԱԳԱՏԱ

Ո՞վ է նա—յայտնի չէ. իսկ նորա անունն է—Րօզալիա:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Սիցիլիայում Րօզալիաներ շատ կան... ես նրանց անհամար թուով գիտեմ: Դու ինձ ասա. այդ Րօզալիան—օրի՞որդ է:

ԱԳԱՏԱ

Ո՞վ գիտէ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ամուսնացած է:

ԱԳԱՏԱ

Ո՞վ է իմանում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այրի՞ է:

ԱԳԱՏԱ

Նոյնպէս յայտնի չէ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ուրեմն անյայտ է: Վերջապէս, գեղեցիկ է նա:

ԱԳԱՏԱ. — Երբ լեք +աշէլլէ

Հըմ...

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այդ մասին քեզ մինչև անգամ հարցնելն աւելորդ էր:

ԱԳԱՏԱ

Ինչո՞ւ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ոչ մի պառաւ կին անգամ այդ հարցին չի պատասխանիլ, բայց միայն ուսերը վեր կը քաշի, ինչպէս դու: Այդ աւելի լա՛ւ է ես ինքըս տեսնեմ: Բանը նրանումն է՝ որ այդ անծանօթ կինը շատ մոտատանջութեան պատճառ է եղել հօրեղբօրս համար. որպէս հովիւ նա պարտական է, նա ինքն է այդպէս ասում, բարոյականութեան պահապան հանգիստանալ, դէմ դնել և հեռացնել գայթակղութիւնը: Իսկ այդ Բօզալիան, դատելով այնպէս՝ ինչպէս լսած էմ, յարուցանում է կասկածանքներ և շփոթում է տեղական բնակիչների խղճմտանքը, որոնք, դժբաղդաբար, նոյն իսկ բնութիւնից՝ ենթարկուած են կեղծաւոր բարեպաշտութեան և սնապաշտութեան:

Ա.Գ.Ա.ՍԱ.

Ա՛խ, այստեղ շատ մեծ գայթակղութիւն կայ: Իզուր չէ, որ ես աղօթում եմ Մադօննային, որ մի փոքր շուտ դուրս գամ այս տանից, մեղքից:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ինչո՞ւ չես դուրս գալիս:

Ա.Գ.Ա.ՍԱ.

Զի կարելի: Այս հերետիկոս բժշկի մօտ ես կենում եմ մօնսիւնիօրի հրամանով, իսկ նա իմ խոստովանհայրս է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այդ ինչ որ կասկածելի է: Ուրեմն, հօրեղբայրս մի ինչ անբաւականութիւն ունի բժշկի հետ...

Ա.Գ.Ա.ՍԱ.

Զգիտեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Բայց ինչո՞ւ պէտք է անբաւական լինէին իրարից:

Ա.Գ.Ա.ՍԱ.

Ա՛խ Դօն Ֆերնանդօ, այդ բաների համար լաւ է լռել, նոքա աւելի քան անպատվում են բարոյականութիւնը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այդ դէպքում ես քեզանից հարցնում եմ. ի՞նչ է պատճառը, որ քո հոգեւոր տէրը պահում է քեզ, այսպէս ասած, դժոխային դռների առաջ: Միթէ որպէս պահապանի՞... կամ լրտեսի՞:

Ա.Գ.Ա.ՍԱ.

Ոչ, Դօն Ֆերնանդօ, ինձ խեղճ մեղաւորիս, հոգւոյ փրկութեան համար հարկաւոր է քաւութիւն:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Լրտեսի պաշտօնում: (Աւանջել): Պէտք է զգուշացնել բարեկամիս:

Ա.Գ.Ա.ՍԱ.

Թոյլ տուեցէք ինձ գնամ, ես գործ ունեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ապասիր. ինձ հարկաւոր է էլի բան հար-
ցնել... միայն լաւ պատասխանիր, ուսերդ
վեր մի քաշիր: Բժիշկը ամուսնացած էր:

ԱԳԱՏԱ

Իհարկէ, բայց նորա կինը վաղուց է մեռել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ո՞րտեղ է մեռել:

ԱԳԱՏԱ

Այս իսկ տանը, երկու տարի առաջ, երբ
բժիշկը տեղափոխուեց Կատանիա քաղաքը բը-
նակուելու իւր փոքրիկ աղջկայ հետ: Այդ երե-
խայի ծննդեան ժամանակ կինը մեռաւ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Կատանիա քաղաքը: Ուրեմն իմ այնտեղից
հեռանալուց յետոյ, ապա թէ ոչ ինչպէս կարե-
ւի էր, որ չպատահէինք: Եւ իմ բարեկամս մին-
չեւ այժմ այրի՞ է:

ԱԳԱՏԱ

Ո՞վ գիտէ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Կրկին „ով գիտէ“:

ԱԳԱՏԱ

Ա՛խ, Աստուած իմ Ապա ինչ ասեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Դու, պէտքէ ասել, որ սիրում ես բաւա-
կան խօսալ: Եւ այդպէս՝ կասկածանք կ'այ, որ
նա կրկին ամուսնացած լինի:

ԱԳԱՏԱ

Հըմ...

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Գուցէ ծածո՞ւկ: Երեւի Բօղալիայի հե՞տ:

ԱԳԱՏԱ

Է՛:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

„Հըմ...է...“ Դու միայն վրդովում ես իմ
հետաքրքրութիւնը:

ԱԳԱՏԱ

Իսկ ես դորա հետ գործ չունեմ: — Կամե-
նում էք տեսնել անծանօթ տիկնոջը: Ահա նա:
(Յոյց է պալէս յախ Դրան իորդը):

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Լաւ չէ տեսնում: Նրա հետ օրիորդ է...
ո՞վ է նա, նորա աղջիկն է: Թէ՞ բժշկինն է:

ԱԳԱՏԱ

Ոչինչ չգիտեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ առանցին:

Զորմանալի բան: (Նորա): Բայց այդ շատ
հետաքրքիր բան է. ես շատ սիրում եմ այսպի-
սի նորութիւններ և եթէ յաջողուի ինձ բա-
նալ...

ԱԳԱՏԱ

Զի յաջողուիլ...

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Բայց դարձեալ... սպասիր, նրա՞յն այստեղ

են գալիս: Հեռանա՛նք մի փոքր: (Գնա՛՛մ էն քէօ
Խաչքը):

ՏԵՍԻԼ 2.

ՐՕԶԱԼԻԱ, ԷՄՄԱ, Դ. ՖԵՐՆԱՆԴՈ
ԵՒ ԱԳԱՏԱ

ՐՕԶԱԼԻԱ. Բռնա՛ծ է Էմմայի յետքից:

Պարտէ՛ղ չէ՛ք ուղղում գնալ, սիրելի Էմմա,
ծաղիկներ քաղելու:

ԷՄՄԱ.

Ամենայն ուրախութեամբ: Մենք մի գեղե-
ցիկ փունջ կ'ընենք և ես կ'ընծայեմ իմ պա-
պայիս, երբ որ կը վերադառնայ հիւանդանոցի
սայցելութիւնից: Ես նրան ընծայում եմ ծաղիկ-
ներ, իսկ նա ինձ համբուրում է. — մէջտեղում
ե՛ս եմ օգտուած լինում:

ՐՕԶԱԼԻԱ.

Այ՛ո, ծնողների համբոյրները-սրբութիւն են:
Այդ աւելի լաւ են զգում այն որդիները, ո-
րոնք օգտուել չեն կարող այդ համբոյրներից:

ԷՄՄԱ. Կիւրա՛ւեմ:

Եւ ես գիտեմ միայն հօր համբոյրները:

ՐՕԶԱԼԻԱ.

Գնա՛նք, գնա՛նք պարտէ՛ղ: (Գնա՛՛մ էն քէօ
Խաչքը):

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ Տօպէնալու՛մ:

Ներեցէք, եթէ...

ԷՄՄԱ. Կամայ Բօլալիային:

Մի ինչ պարոն է: Ո՛ր է սա:

ՐՕԶԱԼԻԱ. Դայելու՛մ Ֆերնանդօյին:

Ես սորան մի տեղ տեսել եմ, բայց...

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ես փնդռում էի... իմ համեստութիւնս...
(Ագապային): Կարծես ես սորան ճանաչում եմ:

ԱԳԱՏԱ.

Մի՞թէ:

ՐՕԶԱԼԻԱ.

Ներեցէք, սինիօր, ինձ սպասում են:

ԱԳԱՏԱ. Կա՛մային:

Այդ ո՛ր է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Շնորհ արէք, մէկ րոպէ: Հիմա ես տես-
նում եմ, որ իմ յիշողութիւնս ինձ չէ խաբում:
Մենք ծանօթ էինք Կատանիա քաղաքում:

ՐՕԶԱԼԻԱ.

Ձեմ յիշում, սինիօր:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Դուք չէք յիշում Դ. Ֆերնանդօյին, որը
ձեր հօր տունը յաճախում էր, որը ամենամօտ
բարեկամ էր ձեր...

ՐՕԶԱԼԻԱ. Իսկայն Կարելու՛մ Դորա Խաչքը:

Նաո կարող է լինել... այ՛ո, ինձ թվում
է... բայց այնքան տարիներ են...

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Տասն և չորս տարի է:

ԲՕԶԱԼԻԱ

Այ՛ո, տասն և չորս:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ի՜նչ բազդաւոր դէպք... իսկ այս գեղեցիկ օրիորդը ձեր աղջիկն է:

ԷՄՄԱ

Ոչ, սինիօր, ես իմ մօրս չեմ տեսել. նա մեռել է՝ ինչ լոյս աշխարհ հանելուն պէս... ո՞րպիսի խղճի խայթոցներ եմ զգում ես: Գուցէ ես յիմար եմ: Բայց արգեօք ե՛ս չէի նորա մահուան պատճառը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Խե՛ղճ...

ԷՄՄԱ

Ա՛խ եթէ բարի Բօզալիան իմ մայրս լինէր...

Ա.Գ.Ա.ՍԱ *առանձին:*

Այ՛ո, հէնց նա ինքն է:

ԷՄՄԱ

Ես այս ցաւը չէի զգալ իմ սրտում: Ասում են, որ առողջութիւնս անյուսալի է, որ ես սաստիկ զգայուն եմ, շուտ շուտ լաց եմ լինում... Բայց այդ նրանից է, որ ես չեմ կարողանում մոռանալ... հէնց որ միտս է ընկրնում, որ իմ մայրս մեռել է իմ պատճառով, ես վրդովւում եմ... ես շարունակ վրդովւում եմ:

Իսկ եթէ հայրս չ'լինէր այնպէս աղնիւ, այնպէս բարի, որը ինձ այսպէս սիրում է, այսպէս փայփայում է ամեն րոպէ...

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ուրեմն դուք Պալմիրի աղջիկն էք:

ԷՄՄԱ

Այ՛ո, սինիօր:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Իմ երեսայութեան ընկերի՞ս:

ԲՕԶԱԼԻԱ *զարմայմաճք:*

Նա ձեր ընկերն է:

ԷՄՄԱ

Ա՛խ, դուք նորան գիտէ՛ք: Դուք նորան սիրում էք: Որքան ուրախ եմ ես: Աւելի չէ՞, սինիօր, որ նա հրեշտակ է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այ՛ո, նա հազուադէպ մարդերիցն է. և այժմ, երբ ես նայում եմ ձեզ վերայ և լսում եմ ձեզ, ես տեսնում եմ, որ նա բաւականաչափ վարձատրուած է իւր բարի յատկութեանց համար: Ուղիղ որ ես յիմայ մտաբերում եմ, որ նա աղջիկ ունէր:

Ա.Գ.Ա.ՍԱ

Ես ձեզ չէի՞ ասում: Դօն Ֆերնանդօ, որ նա աղջիկ ունէր... միայն թէ տարիների ընթացքում շատ փոխուել է նա: Նամանաւանդ աչքերը սեւ էին, իսկ հիմայ կապտագոյն են:

գոնէ այդպէս է ասում արա դայեակը. իսկ
դայեակը, ես գոնէ իմ փորձով գիտեմ, սխա-
լուել չէ կարող:

Դ. ՖԵՐՆԱՆԴՍ

Սուրբ Զէնարրօն հրաշք է ստեղծել:

Ա.Գ.Ա.ՍԱ

Երևում է, որ այդպէս է:

ԲՕԶԱԼԻԱ

Դուք ի՞նչ էք կամենում դորանով ասել,
սիրելի Ագատա:

Ա.Գ.Ա.ՍԱ

Բոլորովին ոչինչ: Ես ասում եմ այն, ինչ
հարկւր անգամ լսել եմ ուրիշներից:

ԲՕԶԱԼԻԱ

Դուք շատ էք սիրում խօսալ... քայց այ-
ժըմ մենք այլ ևս կարօտութիւն չունենք դո-
րանում, և ես կըխնդրէի ձեզ լաւ է պարա-
պել ձեր գործով, որովհետեւ...

Ա.Գ.Ա.ՍԱ

Ինչպէս կը հրամայէք:

ԲՕԶԱԼԻԱ

Ես ձեզ խնդրում եմ:

Ա.Գ.Ա.ՍԱ

Եւ ինչո՞ւ չը հրամայել: Մի՞թէ դուք տան-
տիկին չէ՞ք:

ԲՕԶԱԼԻԱ

Դուք միայն տան տէր ունէք:

Ա.Գ.Ա.ՍԱ

Է՛հ, թող այդպէս լինի:

ԷՄՄԱ

Վ'ատ Ագատա: Դու միշտ վիճում ես: Ի՞նչ
ես դուրս տալիս, սեւ ու կապտագոյն աչքերի
մասին: Աչքերն ինձ Աստուած է տուել, նա
կարող է և փոխել նրանց: Ես չեմ սիրում, երբ
դու միշտ նեղացնում ես բարի Բօզալիային, ո-
րը իմ մօրս տեղն է, և որին մօրս պէս սի-
րում եմ:

Ա.Գ.Ա.ՍԱ

Ա... ա՛յ արդէն ինչպէս:

ԷՄՄԱ

Գնա՛, ես քեզ չեմ սիրում:

Ա.Գ.Ա.ՍԱ

Լաւ, գնում եմ: (Գնալով առանցիկ): Տեսէք
ինչ արտի տէր են այս ապօրինի ծնունդ աւան-
ցողները:

Դ. ՖԵՐՆԱՆԴՍ

Այս կեղծաւոր բարեպաշտները—պակաս
կախարդներ չեն:

ԲՕԶԱԼԻԱ

Պէտք է համբերել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՍ

Պատմեցէք ինձ հիմայ, սինիօրա Բօզալիա,
ձեր ընտանիքի մասին, Էր...

ԲՕԶԱԼԻԱ լռութեան նշան է առնու:

Էմմա, ինձ հարկաւոր է խօսել Դօն Ֆեր-

նանդոյի հետ. իսկ դուք չէ՞ք կամենալ պարտիզու՞մ զբօսնել:

ԷՄՄԱ

Ինչո՞ւ չէ. ես ծաղիկներ կը քաղեմ, քանի որ հայրս չէ վերադարձել: Յտեսութիւն, Բօզալիա. մէնաք բարով Դօն Ֆերնանդօ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Դնաք բարով, երկնային հրեշտակ: (Էմանուէլ): Ես, հաւատացէք, խղճահարկում եմ, որ ձեզ ~~սպասեմ~~ անհանգիստ եմ անում. սինիօրան կարող էր մեզ հետ այստեղ մնալ: Դուք է այն բանում, որ պէտք է ասէք ինձ, մի ինչ գաղտնիք կայ:

ԲՕԶԱԼԻԱ

Օրիորդը չէ իմանում իմ անցեալի մասին. նա այնքան տխրեցուցիչ է, որ ես, պատասխանելով ձեր հարցերին, կ'ազդէի և նորա քնքոյշ սրտի վերայ... Նա, խեղճը, այնքան սիրում է ինձ... Դուք ինքներդ տեսաք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այ՛ո բայց ես չեմ հասկանում, թէ այստեղ ի՞նչ վատ բան կայ, եթէ իմանայ որ դուք մարդ էք ունեցել: Բայց չտեսնելով ձեզ մօտ ձեր ամուսնուն և դատելով ձեր աննախանձելի դրութիւնը այս տան մէջ, եթէ արտաքինը ինձ չէ խաբու՞մ, կարծում եմ որ նա մեռել է:

ԲՕԶԱԼԻԱ

Իսկ եթէ կենդանի՞ է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այդ դէպքում պէտք է համաձայնել, որ արտաքինը խաբեբայական է: Կենդանի՛: Այդ ուրիշ բան է... Ի՞նչպէս, ո՞րտեղ է նա ապրում: Ի՞նչ է պատահել ուրեմն: Ապահարկո՞ւմ:

ԲՕԶԱԼԻԱ

Ես չեմ կարող պատասխանել ձեզ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Բայց ես ձեր աչքերից տեսնում եմ... Նա է ձեզ թողել: Դուք ձեր գլուխը խոնարհում էք: Թողե՛լ է: Ես այդպէս էլ սպասում էի: Այդ բուռն զգացմունքները աւելի պիտանի են բոմանների համար, քան իրական կեանքի և միշտ դժբա անբախտութեան են հասցնում: Ես շատ լաւ յիշում եմ ձեր պսակը. նա, խելագարը, ձեզ փախցրեց: Միայն մեր հրային երկրների տակ և վօլկանական հողի վերայ են ծրնվում այդպիսի մարդիկ. նոքա ոչ մի դէպքում քչով բաւականանալ չգիտեն, նոքա միշտ ծայրահեղութեան են հասցնում: Եթէ նոքա բարեգործութիւն են անում ուրեմն ամենամեծ, եթէ ո՞ճիրներ՝— ուրեմն սարսափելի:

ԲՕԶԱԼԻԱ

Այ՛ո, սարսափելի, շատ սարսափելի:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ձեր ծնողները արգարացի էին, երբ...

ԲՕԶԱԼԻԱ

Այս, լռեցէք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ում ճակատին ինչ որ գրուած է, կ'իրագործուի... Ես այդ բանում համոզուած եմ: Դոնէ դուք ազատ կըլինէիք: Բայց ի՞նչպէս էք բժշկի հետ ապրում: Ոչ այնքան լաւ, այնպէս չէ: Ես հասկանում եմ. առանց օրինաւոր հանգամանքների, առանց եկեղեցւոյ օրհնութեան:

ԲՕԶԱԼԻԱ «աստիկ լարմայա»:

Դոն Ֆերնանդօ, ի՞նչ էք ասում գուր:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Հանգիստ եղէք. ես բոլորովին մեղադրելու համար չեմ ասում. ես ունեմ իմ հայեացքներս պահի մասին... բայց մեր քաղաքական կանոնադրութիւնները... Հռովմէական Պապական դուռը... Տրիէստեան մայր եկեղեցին...

ԲՕԶԱԼԻԱ

Բաւական է. Դո՞ւք Լսո նոյնը... Ես այստեղ էլ բամբասուած եմ... ամենայն տեղ: Բայց միւսնոյն ժամանակ ես անմեղ եմ. աղքատութեան մէջ, ծնողներից թողնուած, ես ընտրեցի դաստիարակչուհու պաշտօնը, որպէս ապրուստի միակ միջոց: Բժիշկ Արրիգօն, ամենաբարի մարդ լինելով, որին միայն ես եմ ճանա-

չում, դարձաւ ինձ համար փրկիչ: Մենք ոչ մի բանում չենք կարող մեզ մեղադրել, Դոն Ֆերնանդօ. — մեր հոգին ու խիղճը մաքուր է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ես ձեզ հաւատում եմ, սինիօրա Բօզալիա, բայց ես ձեզ կըյարգէի հակառակ դէպքում էլ: Ինձ համար առողջ դատողութիւնը աւելի համոզեցուցիչ է քան կանոնական օրէնքը. բայց համաձայնեցէք ինքներդ, իմ հօրեղբայր մօնսինիօրը իմ մտքերս ունենալ չէ կարող:

ԲՕԶԱԼԻԱ Այժ արմատի:

Ի՞նչ էք ասում: Մօնսինիօրը ձեր հօրեղբայրն է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ձեզ այդ դուր չէ՞ գալիս:

ԲՕԶԱԼԻԱ

Սաստիկ. հէնց նա է ինձ հալածողը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այ՛ո, նորա խօսքերից կարելի է հասկանալ, որ նա դէպի ձեզ մի առանձին բարեկամութիւն չունի. բայց հետամտել ձեզ, հալածել... գուցէ իւր խիղճն է պահանջում այդպէս վարուելու:

ԲՕԶԱԼԻԱ

Բայց խիղճ ունեցողները չեն բամբասիլ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Համաձայն եմ. բայց երեւկայեցէք՝ ձե՛զ

նորա փարաջայի մէջ: Նա գործում է սկզբունքով: Մինչև անգամ, եթէ կամենում էք, նա գործում է որպէս անգամ ինկվիզիցիայի, բայց աղնիւ անգամ: Նա համոզուած է, որ ձեր և Արրիգոյի մէջ այնպիսի յարաբերութիւններ կան, որոնց չէ կարելի անուանել հերետիկական...

ԲՕԶԱԼԻԱ

Բայց այդպիսի յարաբերութիւններ մեր մէջ գոյութիւն չունին:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ես ձեզ հաւատում եմ: — Բայց հասարակական կարծիքը...

ԲՕԶԱԼԻԱ

Հասարակական կարծիքը կարելի է շուռ տալ ինչպէս ուզէք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ո՞ւմ ինչ գործն է:

ԲՕԶԱԼԻԱ

Ո՞րտեղ է ծնունդը բամբասանքը: Ո՞րտեղից է դուրս եկել, նաև մտել տնէց տուն, եթէ ոչ նոյն խիւ ձեր հօրեղբորից:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ասացէք. հօրեղբայրս ձեզ նախատինքներ կարդացել է, սպառնացել է ձեզ:

ԲՕԶԱԼԻԱ

Ոչ, Ա՛խ, Աստուած իմ: Այդ կռիւն մթու-

թեան մէջն է, գաղտնիքի ծածկոյի տակ: Զոհը զգում է իւր վերայ բռնուցքներ և չէ տեսնում այն ձեռքերը, որոնք խրում են: Ես շարունակ երկիւղի մէջ եմ: Եթէ ոչ այսօր, ուրեմն վաղը... Պատէրների ատելութիւնը անողորմ է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ատելութիւն. ընդհանրապէս ես ձեզ հետ համաձայն եմ... բայց իմ հօրեղբայրս... Նա ձեզ ատում է:

ԲՕԶԱԼԻԱ

Այ՛ո, սաստիկ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Բայց պէ՛տքէ գաղանի պատճառներ լինեն:

ԲՕԶԱԼԻԱ

Այ՛ո, կան:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Կարո՞ղ եմ այդ իմանալ ես:

ԲՕԶԱԼԻԱ

Ոչ. — ես խոհեմ եմ: (Մտնում է Ա. Գ. Ա. Ս.)

ՏԵՍԻԼ 3.

ԲՕԶԱԼԻԱ, Դ. ՖԵՐՆԱՆԴՈ ԵՒ Ա. Գ. Ա. ՍԱ

ԲՕԶԱԼԻԱ

Ի՞նչ էք ուզում, Ա. Գ. Ա. Ս.:

Ա. Գ. Ա. Ս.

Ես եկայ իմանալու, տանն է արդեօք բը-

Ժիշկը: Մօնսինիօրը սպասում է նորան գահ-
լիճում, նա անպատճառ ուղղում է բժշկին տես-
նել:

ԲՕԶԱԼԻԱ Վախեցա՜:

Մօնսինիօրը:

Ա.Գ.Ա.ՍԱ.

Ձեզ, սինիօրա, այդ այցելութիւնը դուր
չէ՞ գալիս:

ԲՕԶԱԼԻԱ

Այդ այցելութիւնը ի՞նչ չէ: Բժիշկը դեռ
չէ վերադարձել, բայց շուտով կը գայ: Եթէ
մօնսինիօրը կը բարեհաճի սպասել, այստեղ բե-
րէք նորան, նորա եղբօր որդին այստեղ է:

Ա.Գ.Ա.ՍԱ. Զաւարճ:

Շատ շնորհակալ եմ ձեզնից: (Գնում է):

ԲՕԶԱԼԻԱ

Ես գնամ պարտէզ կամայի մօտ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՍ

Ես խորհուրդ կը տայի ձեզ այստեղ մնալ՝
դուք ինչ օգնած կը լինէիք:

ԲՕԶԱԼԻԱ

Ե՞ս մնամ: Անկարելի է: Դօն Ֆերնանդօ, դուք
ինչ ազօրիկ ժամանակս էլ ճանաչում էիք, դուք
համոզուած էք, որ ես ոչնչով մեղաւոր չեմ-հա-
ւատացրէք նորան, որ ոչ մի վատ բան չեմ անում,
որ դուր տեղն է այսպէս իմ ետեւիցս ընկել, ես
առանց այդ էլ շատ նեղութիւններ եմ կրել:

Թող նա ինչ հանգիստ թողնի այս համեստ տա-
նը: Ասացէք նորան այս ամենը, կամ գ'ոնէ՛ մի՛
սեացրէք ինչ և՛ ս առաւել: Ազնիւ եղէք, աղա-
չում եմ ձեզ: (Գնում է նոյն դռանով, որով է մտնում):

Դ. ՖԵՐՆԱՆԴՍ

Ատելութեան պատճառներ կ'ան: Իմ հօրեղ-
բայրս փոխանակ արատի, վատութեան հետ կը-
ռուելու, չէ՞ կռվում արդեօք բարեգործու-
թեան հետ: Ես շատ լաւ յիշում եմ թէ ինչ-
պէս այդ հովիւը վաղ ժամանակներում որքան
առաւելութիւններ էր տալիս մի քանի գառ-
նիկների և ի՞նչ զարմանալու բան է, որ նա,
ներկայումս էլ, այս մոլորեալ ոչխարին ուղղում
է քշել փարախը: Գթութեան պատրուակով:
(Մօնսինիօրը ներս է գալիս):

ՏԵՍԻԼ 4.

ՄՕՆՍԻՆԻՕՐ ԵՒ Դ. ՖԵՐՆԱՆԴՍ

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դու դեռ այստե՛ղ ես, Ի՞նչպէս է յաջող-
վում քո խուզարկութիւնը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՍ

Ես գործեցի որպէս ինկվիզիցիայի անդամ:
Կուղէք հաւատացէք, կուղէք ոչ, բայց շատ դը-
ժուար արհեստ է:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ի՞նչպէս գտար դու այդ կնոջը. ի՞նչ հա-

մոգմուկների հասար, Դու մերժեցիր Աստուծոյ
ծառայութիւնը և ուղեցիր աշխարհային կեանք
վարել. ուրեմն դու պէ՛տք է իմանաս փորձով
ամեն մի շարժումը, ամեն մի կնոջ երեսի ար-
տայայտութիւն. և չափազանց զգայունութիւնը
և ամաչկոտութիւնը, և հրապայրները...

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այ՛ո, ես քիչ ու միչ գիտեմ, բայց նրանք,
որոնց խոստովանվում են կանայք, աւելի գիտեն:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այդպիսի կանայք խոստովանութիւն չեն
ընդունում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ինչ յիմարներն են...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Բայց դարձեալ ի՞նչ իմացար:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Բայց այդ Բօղալիան իւր հանդարտ տըխ-
րութեամբ, շատ գուրեկան է. իսկ եթէ ես ճգ-
նաւոր, հոգեւորական լինէի, այն ժամանակ ջար-
դել տալով նորան՝ կմախք կը դարձնէի. ահա
ինչու ես էլ արդարացնում եմ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դու ի՞նչ ես արդարացնում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ձեր գէպի նա ճշմարիտ ատելութիւնը:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ե՛ս նորան ատեմ: Ընդ հակառակն. ես նո-
րան խղճում եմ, շատ եմ խղճում: Ես կամե-
նում էի ճշմարտութեան ճանապարհը դարձնել
նորան: Իմացի՛ր, որ ես մինչև անգամ վճռեցի
վաճքում, ինձ մօտ, տեղ տալ, պահպանել նո-
րան:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Մի՛թէ: (Աստիճան): Եւ նա չհամաձայնե՞ց:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Արհամարհանքով և՛ վճռողաբար: Դժուա-
րացաւ, չկարողացաւ հեռանալ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ո՞ւմ նից:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իւր սիրեկանից:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Արրիգօյի՞ց: Դուք սխալվում էք, նա նրա
սիրեկանը չէ՛:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Սիրեկանը չէ՞: Դու Պալմիրիին չես ճանա-
չում: Ես նորա սրտի խորքերը գիտեմ և տես-
նում եմ: Նա անաստուած է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Անաստուած:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այ՛ո: Ի՞նչ գրքեր է նա կարդում: Ամբողջ

նորա տանը միայն մի խաչելութեան պատկեր
կայ և այն նորա համար միայն, որ նա կար-
ծում է թէ յայտնի Բէնվէնուտօ Զէլլինիի նկա-
րըն է. ում պատկերներն են նորա գրադարա-
նում: Սարնիի, Արնալդօյի, Զիօրանօ Բրուչոյի,
Կամպանէլլների, Ֆիլիանջիէրիի, Ֆրանչէսկօ Կօն-
ֆօրտօյի, Դօմէնիկօ Զիրիլլիի:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այդ բոլորը մեծ մարդիկ են:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իրանց կեանքն էշաֆօտի վերայ վերջա-
ցըրած:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ինչպէս մարտիրոսներ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ի՞նչ ես ասում դու. խելքդ գլուխդ ժո-
ղովիր:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ես զարմանում եմ, մօնսինիօր, ի՞նչ կեր-
պով կամ ի՞նչ ճանապարհով է, որ դուք այդ-
պէս չաւ գիտէք ամեն բան, ինչ որ այստեղ ա-
նում են, խօսում են, մտածում են, ուտում են.
Իսկ դուք շատ սակաւ էք այստեղ լինում:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես շատ թափանցիկ աչքեր ունեմ. ես տես-
նում եմ պատերի միջից:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Բայց ես չեմ հասկանում, թէ ինչի՞ վերայ
էք հիմնում ձեր դատաւճիռը Արրիգօյի բա-
րոյականութեան մասին և նորա յարաբերու-
թեանց մասին դէպի Ռօզալիան:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դու չե՞ս հասկանում, որ առանց աստուա-
ծապաշտութեան չի կարող լինել և բարոյա-
կանութիւն:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Զեմ հասկանում: Ես գիտեմ, որ բժշկին
գովում են ըստ մեծի մասին խեղճերը, աղքատ-
ները, որ անուանում են նորան բարի, աղնիւ
մխիթարիչ հրեշտակ...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Հէնց դորանումն է, որ ես տեսնում եմ և
գայթակղութիւն և անառակութիւն:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ես տեսնում եմ, որ մեր մէջ կռիւ է ա-
ռաջանում սկզբունքների պատճառով, և այդ
կռուի զոհը խեղճ Ռօզալիան կը լինի:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Խեղճ Ռօզալիան պէտքէ պատրաստուի գը-
նալ այստեղից շատ հեռու:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Դուք նորան դու՛րս կանէք: Դո՛ւք: Ան-
պատուել այդ կնոջ միմիայն կասկածանքի հի-

ման վերայ. այդ գործը...

ՄՕՆՍԻՆԻՐ

Կատկածանքի հիման վերայ: Իմացիր, որ իմ ձեռքումն այնպիսի փաստեր կան, որոնք ըստիպում են ինձ վճռողաբար գործել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Լաւ մտածեցէք գործի մասին, մօնսինիօր: Բօզալիան արժանի չէ այդ վարժուէքին. ես նորան վաղուց ճանաչում եմ. նա շատ բարի էր, ազնիւ էր... և եթէ այն անբաղդ ամուսնութիւնը չըլինէր:

ՄՕՆՍԻՆԻՐ

Նա ամուսնացած է... աւելի փառ... բայց ոչ, աւելի լաւ: Ո՛ր է նորա մարդը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ես չգիտեմ:

ՄՕՆՍԻՆԻՐ

Նորա բաժանուէ՛լ են:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Բօզալիան չէ մեղաւորը:

ՄՕՆՍԻՆԻՐ

Մի՛շտ կինն է մեղաւոր:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Իսկոյն մի՛ վճռէք. հարկաւոր է քննել:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ամուսնութեան գործերը մենք չենք քըննում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Եւ սխալուած էք լինում:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ի՞նչ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այսինքն...

ՄՕՆՍԻՆԻՐ

Բայց դարձեալ ես շնորհակալ եմ քեզանից այդ նորութեան համար:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Մտածեցի օգնել, բայց դուրս եկաւ աւելի փառ: (Ներսէս է գալիս Ագապան):

ՏԵՍԻԼ 5.

ՆՈՅՆՔ ԵՒ ԱԳԱՏԱ

ՄՕՆՍԻՆԻՐ

Ի՞նչ է, վերադարձա՛ւ այդ սինիօրը:

ԱԳԱՏԱ

Այ՛ո, բայց բաւական ուշացաւ պարտիզում ծախկանց վնջի համար: Ուրիշ կերպ չէր կարելի, ընծայում էր... աղջիկը: Այդ պատճառով էլ յառաջացան քնքուշութիւններ, ժպիտներ և հայեացք... Բօզալիայի հետ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այո՛ւ անիծածը...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Պատիւ կանի՞ ինձ ընդունելու:

ԱԳԱՏԱ

Նա գնաց գրադարան և խնդրեց մօնսինի-
օրին մէկ բոպէ սպասել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Լաւ: Ի՞նչ բաւականութեամբ ես կը տես-
նեմ նորան:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Բայց ոչ հիմայ. ես պէտք է խօսեմ նորա
հետ առանց վկաների:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Բայց ես...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Մի՞թէ քեզ պէտքէ հրամայել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Գնում եմ: (Գնում է):

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Էլ նոր բան կ'այ:

ԱԳԱՏԱ

Ոչ: Բայց աղջկայ մասին ես հաստատ գի-
տեմ, որ...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Նորա մասին գիտեմ ինչ որ հարկաւորն է:
Գն'ա. (Ագապան համբուրում է նորա յետքը): Վա-
ղը ես քեզ կ'սպասեմ:

ԱԳԱՏԱ

Անպատճառ, մօնսինիօր: (Գնում է):

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այժմ, եթէ պարոն փիլիսոփան ցանկա-
նայ ինձ հետ բանակուիլ մօնել, ես պատրաստ
եմ: (Գալէ՞ է Պալմերի):

ՏԵՍԻԼ 6.

ՊԱԼՄԻԵՐԻ ԵՒ ՄՕՆՍԻՆԻՕՐ

ՊԱԼՄԻԵՐԻ

Մօնսինիօր, խնդրեմ ներէք ինձ, որ ես
ձեզ ստիպեցի այսքան սպասելու, բայց...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես ինքս պէտքէ ներողութիւն խնդրեմ
ձեզնից, որ իմ այցելութեամբ զրկում եմ ձեզ
ընտանեկան ուրախութիւններից, փիլիսոփայա-
կան մտածմունքներից... Հաւատացէք, որ առ-
անց պատճառի...

ՊԱԼՄԻԵՐԻ

Ինչի համար էլ որ եկած լինէք, մօնսինի-
օր, խնդրում եմ ձեզ նստել:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Շնորհակալ եմ ձեզնից (նստում է): Մեզ ոչ
ոք չի՞ լսում:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ոչ որ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այն բանը, որ ես ձեզ պէտքէ ասեմ, շատ
հարկաւորութիւն և նշանակութիւն ունի:

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Ես պատրաստ եմ ձեզ լսելու, ինչպէս և միշտ, նոյն համբերութեամբ:

ՄՕՆՍԻՆԻՐ

Որպէս զի ձեր համբերութիւնը ի չարը գործ չդնեմ, թողնում եմ ամեն տեսակ կողմնակի խօսակցութիւնները և ուղիղ գործն եմ սկսում:

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Յատուկ կը պարտաւորեցնէք:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ես եկել եմ ձեզ հետ խօսելու այդ յայտնի կնոջ մասին...

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Եւ ո՞վ է այդ յայտնի կինը:

ՄՕՆՍԻՆԻՐ

Հմ... Բողալիան:

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Խօսակցութիւնը նոր չէ, բայց միշտ դուրեկան է:

ՄՕՆՍԻՆԻՐ

Այս անգամ դուք չի գալ ձեզ: Նա անպաճառ պէտքէ հեռանայ՝ ոչ թէ միայն ձեր տանից, այլ և այս երկրից:

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Պատճառը, Մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ես չէի կամենալ պարզաբանել սորանից աւելի:

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Այդ դէպքում մեր խօսակցութիւնը անվրձիւ կը մնայ: Դուք ինձ փիլիսոփայ էք հաշտում, փիլիսոփայի առաջին գործն է—գտնել իրերի և հանգամանքների պատճառները: Ես չեմ գտնում և ոչ մի խելացի հիմք այդ դէպքում, որի մասին դուք խօսում էք: Բողալիան ազնիւ կին է. ապրում է ազնիւ մարդու տան մէջ—նա իմ աղջկանս դաստիարակչուհին է, և բաւակ'ան է:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ձեր աղջկայ...

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Դուք կատկածում էք, Մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ոչ: Ես միայն երկիւղ եմ կրում, որ այդ աղջիկը նա չլինի, որ ձեզանում ծնուել է և որին ես պատիւ ունեցայ մկրտելու:

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Ինչպէս թէ...

ՄՕՆՍԻՆԻՐ

Ես կարծում եմ, որ երեխան—խակական էմման, մեռած է Կառանիպոյում, ձեր այս քաղաքը գալուց մի քանի ամիս առաջ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ես պատրաստ եմ ձեզ լսելու, ինչպէս և միշտ, նոյն համբերութեամբ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Որպէս զի ձեր համբերութիւնը ի չարը գործ չդնեմ, թողնում եմ ամեն տեսակ կողմնակի խօսակցութիւնները և ուղիղ գործն եմ սկսում:

ՊԱԼՄԻԵՐԻ

Յատուկ կը պարտաւորեցնէք:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես եկել եմ ձեզ հետ խօսելու այդ յայտնի կնոջ մասին...

ՊԱԼՄԻԵՐԻ

Եւ ո՞վ է այդ յայտնի կինը:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Հմ... Բօզալիան:

ՊԱԼՄԻԵՐԻ

Խօսակցութիւնը նոր չէ, բայց միշտ գուրեկան է:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այս անգամ դուք չի գալ ձեզ: Նա անպաճառ պէտքէ հեռանայ՝ ոչ թէ միայն ձեր տանից, այլ և այս երկրից:

ՊԱԼՄԻԵՐԻ

Պատճառը՝ Մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես չէի կամենալ պարզաբանել սորանից աւելի:

ՊԱԼՄԻԵՐԻ

Այդ դէպքում մեր խօսակցութիւնը անվրձիւ կը մնայ: Դուք ինձ փիլիսոփայ էք հաշտում, փիլիսոփայի առաջին գործն է—գտնել իրերի և հանգամանքների պատճառները: Ես չեմ գտնում և ոչ մի խելացի հիմք այդ դէպքում որի մասին դուք խօսում էք: Բօզալիան ազնիւ կին է. ապրում է ազնիւ մարդու տան մէջ—նա իմ աղջկանս դաստիարակչուհին է, և բաւական է:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ձեր աղջկայ...

ՊԱԼՄԻԵՐԻ

Դուք կասկածում էք, Մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ոչ: Ես միայն երկիւղ եմ կրում, որ այդ աղջիկը նա չլինի, որ ձեզանում ծնուել է և որին ես պատիւ ունեցայ մկրտելու:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ինչպէս թէ...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես կարծում եմ, որ երեխան—խսկական էման, մեռած է Կառանիպոլում, ձեր այս քաղաքը գալուց մի քանի ամիս առաջ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Դուք սո՛ւտ էք ասում:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Սորանից ճշմարիտ ոչինչ չէ կարող լինել: Այսօր երեկոյեան ես ստացայ Բէնէդիկտինների արքատից, Էմմայիդ մահուան վկայականը. — ես պահանջել էի այդ ունենալու համար և պատիւ ունիմ ներկայացնելու ձեզ: (Տալիս է Զոհան Բէրը): Ոչինչ, վեր առէք, վեր առէք և ազատ ժամանակից կը նայէք, — ես մէկ ուրիշն էլ ունեմ: Դուք տեսնում էք, որ ես, թէև փիլիսոփայ չեմ, բայց նոյնպէս փնդում եմ հանգամանքների և իրերի պատճառները:

ՊԱԼՄԻԵՐԻ

Այ՛ո, երբ դա հարկաւոր է ուրիշներին վնասելու համար. ես այդ տեսնում եմ, տեսնում եմ նոյնպէս, որ դուք իմ գործերով աւելի էք զբաղվում, քան թէ հարկաւոր կլինէր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Մի՞թէ կողմնակի գործ պէտք է համարել այն, որը տակնուվեր է անում, անհանգիստ է անում իմ հօտիս խիղճը:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ի՜նչ անհանգիստ խիղճ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Եւ այդպէս ձեր կինը մեռած է, ուրիշի վերայ պսակուած չէք, ուրեմն երկրորդ Էմման ապօրինի է:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ես ձեզ այդ բանում կ'համոզեցնէի... բայց իմ վարմունքներիս վերաբերեալ, Մօնսինիօր, իմ խղճմտանքիցս բացի ոչ ոքի հաշիւ չեմ տալիս: Օրինաւոր աղջիկ է Էմման թէ ապօրինի, այդ բոլորովին չէ ապացուցանում, որ Բօզալիան նորա մայրը լինէր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ձի ապացուցանում, բայց ստիպում է կասկածել:

ՊԱԼՄԻԵՐԻ

Կասկածում են միայն վատ մարդիկ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Բայց գոնէ այ թէ ինչն է անկասկած. Բօզալիան ամուսնացած է. իւր ամուսնու հետ բաժանուած է ապրում, ուրեմն... Տեսնում էք, բժիշկ, որ այս էլ գիտեմ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Տեսնում եմ, տեսնում եմ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Բաժանուելով իւր իսկական մարդուց՝ այդ կինը ձեզ մօտ է ապրում:

ՊԱԼՄԻԵՐԻ

„Բաժանուելով“ այդ անկասկածելի է: Բայց ի՞նչ է պատճառը, գիտէ՞ք, արդեօք, Մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ո՛չ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Բայց դեռ դատում էք և վճռում:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Թող Ռօզալիան վերադառնայ...

ՊԱԼՄԻԵՐԻ

Ո՞ւր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իւր ամուսնոյ մօտ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Նէպօլիտական բանդէօրը:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ի՞նչպէս:

ՊԱԼՄԻԵՐԻ

Տասն և չորս տարի է, որ նա դատապարտուած և բանդարկուած է:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դատապարտուած... Ախ, Աստուած իմ: Եւ նա փոխանակ սգալու իւր ամուսնուն...

ՊԱԼՄԻԵՐԻ

Իսկ ի՞նչ է անում նա:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Չգիտեմ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Իսկ ես գիտեմ... Նորա գրութիւնը սոսկալի է: Ռօզալիան ոչ մի բանում մեղաւոր չէ, բայց միւսնոյն ժամանակ դատապարտուած է տանջանքի:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Բայց ո՞վ է մեղաւորը:

ՊԱԼՄԻԵՐԻ

Տրիէնտիան օրէնսդրութիւնը: Մարդը զըրկուած է մարդկային իրաւունքներից, դատապարտուած է յաւիտենական բանդարկութեան, — այդ միւսնոյն է թէ մահ, — մահ աշխարհային, քաղաքական: Եւ կինը չէ կարող անել ինչ որ ուզում է, չէ կարող մարդու գնալ...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այդ օրէնքը սուրբ է:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ձեմ հաւատում:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դուք անպատուաբեր էք խօսում:

ՊԱԼՄԻԵՐԻ

Մի՛ լսեցէք:

ՄՕՆՍԻՆԻՕՐ ՎԵՐ ԿԵՆԱԼԷ

Ձեր վճռին եմ սպասում Ռօզալիայի մասին:

ՊԱԼՄԻԵՐԻ

Իմ վճիռը, մօնսինիօր, հետեւեալն է. ոչ ոք իրաւունք չունի մտնել իմ սիրտը, փնդուել իմ սրտիս կապերը, իմ ընտանիքը. Ռօզալիան անբաղդ է, օրէնքից դատապարտուած է, հասարակութիւնից հրաժարեցրած է, բամբաստուած է անգործներից. ես նորան տուեցի հանգիստ և խաղաղ ապաստան: Եւ ոչ ոք իրաւունք չունի ստիպել

ինձ, աչ խորհուրդներով, ոչ գանգատներով, ոչ սպառնալիքներով, հրաժարեցնելու բարի գործից, որը ես իմ պարտքս եմ համարում:

ՄՕՆՍԻՆԻՐ
Մենք դեռ կրտսերներն ենք:

ՊԱԼՄԻՆԵՐԻ
Ինչպէս կամենաք: Ել բան ունէ՞ք հաղորդելու ինձ:

ՄՕՆՍԻՆԻՐ
Ոչ:

ՊԱԼՄԻՆԵՐԻ

Աւելի լաւ: (Մօնսինիւրը գնում է): Խեղճ...
Րօզալիա: Հեռացնել նորան: Անջատե՛լ իւր աղջկանից: Օ՛հ, ո՛չ: Նա չի կարող դիմանալ այս դառնութեանը:

Վ. Կ. Գ. Ե. Զ. Ը. Թ. Կ. Ե. Զ. Ը. Թ. Կ. Ե. Զ. Ը. Թ.



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Մօնսինիորի կարէնէտը: Դորա մէջ մեծ դրադարան կայ. պատմական պատկերներ, գրասեղան, կատողիկական զբրակալ պատուանդանով ծունրադրութեան համար: Լըբկոյ է:

ՏԵՍԻԼ 1.

ՄՕՆՍԻՆԻՐ Զարմ է գրասեղանի մօտ և մի ժամանակ գիրք է չարդում, յետոյ ժախճ է գիրքը: Բանդում... Ի՞նչ յանցանքի համար... ես կիմանամ: Այս բանը շատ հարկաւոր է. սա աւելի խորհրդաւոր է դարձնում Րօզալիայի դրութիւնը... Ես պէտքէ հեռացնեմ նորան շատ պատճառների հիման վերայ: Ես յիմարութիւն արեցի... ես նորան շատ պարզ հասկացրեցի իմ դիտաւորութիւնները... ես ցոյց տուեցի նորան իմ թուլութիւնս... Նա կարող է ամենքին յայտնել այս հանգամանքը, իսկ ես երբեք չէի ցանկանալ այդ... Վկաներին և յանդիմանողներին պէտքէ մաքրել, հեռացնել... Րօզալիայի հեռանալովը ամբողջ խայտառակութիւնը ընկրնում է բժշկի վերայ,—աւելի լաւ, նորան խղճալու կարեւորութիւն չկայ. բայց անհրա-

ժեշտ է օրինակ ցոյց տալ: Ա... այ քեզ նոր միտք: Եթէ այդ... մարդը շղթայակապ չլինէր: Եթէ կարելի լինէր դուրս բերել նորան, ինչպէս մի սոսկալի ուրուականի,—ինչպէս խըստապահանջ դատաւորի իւր կնոջ վերաբերութեամբ, որը հանգստանում է ուրիշի գրկերում... Անկասկած այդ կատաղի աքսորեալը ինկվիզիցիայից աւելի զարհուրելի կլինի նորահամար: Երեւելի միտք... և, ով գիտէ, գուցէ ինձ յաջողի ի կատար հասուցանել այս միտքը... Ես այնպիսի կապեր ունեմ նէպօլում որ... Թագուհու խոստովանահայրը... Անհրաժեշտ է այդ մասին լաւ մտածել և չափ ու ձեւանել այս գիշեր... (Գալիս է Գայէտանօ Ֆալերո):

ՏԵՍԻԼ 2.

ՆՈՅՆ ԵՒ ԳԱՅԷՏԱՆՈ

ԳԱՅԷՏԱՆՈ Գնէլով «Եղանէ Վերայ Բոնիբոլ»

Աստուած օգնական, Մօնսինիօ՛ր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Աստուած պահպան, Գայէտանօ:

ԳԱՅԷՏԱՆՈ

Թոյլ տուեցէք յայտնեմ մի ինչ անյայտ մարդ մտել է մեզ մօտ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այս ժամանակ... Դու հարցրեցի՞ր թէ ով է նա:

ԳԱՅԷՏԱՆՈ

Հէնց այս րոպէիս հարց ու փորձ արեցի: Ակզբում, ճիշտն ասած, այդ օտարականը, այս գիշերիս, շատ կասկածելի երեաց ինձ. և գրեթե չէր լաւ հետազօտել նորան. պառկած էր և կուչ եկած ճիշտ արձանի տակ: Երբ նա լսեց որ ես մօտենում եմ վեր թռաւ, կանգնեց... և սկսեց չորս կողմը նայել,—երեաց որ վախեցաւ: Ե, մտածեցի ես զարհուրելու ոչ չինչ չկայ և սկսեցի նորան հարց ու փորձ անել: Ինչ որ մի բան ասաց ինձ... ձայնն էլ մի տեսակ դողում էր.—միայն կարողացայ հասկանալ, որ նա ճանապարհին ուշացել էր, սարերում մոլորուել էր և կամենում է տեսնել մօնսինիօրին,—սրպէս ղի շատ կարճ ժամանակով ապաստան խնդրի:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այդ բանը ոչ ոքի չեն արգելում... բայց մեր սարերում աւազակներ են պտտում:

ԳԱՅԷՏԱՆՈ

Կարծեմ նորա մօտ սուր, բա՛ն չկայ. գուցէ ծածկել է:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ի՞նչպէս է հագնուած նա:

ԳԱՅԷՏԱՆՈ

Համարեա այնպէս, ինչպէս մեր քաղաքի մարդիկ: Լայն կօշիկներ, երկայն վերարկու,

Կալաբրիայի գլխարկ և այդ բոլորը մաշուած:
Հասակով բարձր է, երեսը թուխ, անմաքուր,
աչքերը արագաշարժ, միրուքը խճճուած, եր-
կայն...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իսկ տարիքով:

ԳԱՅԷՏԱՆՕ

Մօտաւորապէս քառասուն: Աստուած գի-
տէ նորան, դէմքից ոչինչ չի կարելի հասկանալ,
թէ ինչ տեսակ մարդ է: Գուցէ նա աւազակ
էլ է: Բայց ըստ երեւոյթին շատ հիւանդ է ե-
ղել. — շունչ քաշելուն դժուարանում է և հա-
զիւ կանգնում ոտքերի վերայ. երեւում է որ
յոգնած է: Ձէք կամենալ, մօնսինիօր, ինքնե-
րդ հարցուփորձ անել:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Անշուշտ: Դա շատ հետաքրքիր է: Բեր նո-
րան այստեղ... Բայց չմոռանաս տղերքանցն ա-
սել, որ նորանք պատրաստ լինեն:

ԳԱՅԷՏԱՆՕ

Ինչ ասել կուզէ, մօնսինիօր: (Դնո՛ւ է):

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իսկ եթէ աւազակ լինի՞: Ո՞վ կարող է ճա-
նաչել նորան... Բայց ինչո՞ւ պէտքէ վախենամ
ես: Շատ անգամ հանգամանքներն են ստիպում
նորանց աւազակ լինել, բայց ինքն ըստ ինք-
եան, շատերը նոցանից, վատ մարդիկ չեն, մին-

չեւ անգամ և Աստուածասէր. շատ անգամ նո-
րանք մեզ մեծ ծառայութիւն էլ են անում:
Կարծես գալիս է: (Գայէրանօն Ներսէս Ե Բերնո՛ւ Կօր-
բարձրն):

ՏԵՍԻԼ 3.

ՄՕՆՍԻՆԻՕՐ, ԳԱՅԷՏԱՆՕ, ԿՕՐԲԱԴՕ

ԳԱՅԷՏԱՆՕ

Ահա նա, մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Մօտ եկէք, աղնիւ մարդ. մի վախեցէք:
Դուք յոգնած էք: (Գայէրանօնն). Աթոռ առա-
ջարկիր նորան: (Գայէրանօն ալիս է հօր Բերնո՛ւ):
ԿՕՐԲԱԴՕ չարելով:

Շնորհակալութիւն, մօնսինիօր: (Գայէրա-
նօնն) Ձեզնից էլ շնորհակալ եմ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ Գայէրանօնն:

Գն'ա: (Դնո՛ւ է Գայէրանօն): Ե՛. ի՞նչ էք
ուզում ինձանից. — ասացէք:

ԿՕՐԲԱԴՕ

Մի բան միայն. թոյլ տուեցէք գիշերել
այստեղ, կամ մի փոքր հանգստանալ, ես ամբողջ
օրը ոտով եմ ման եկել, գիշերը վերայ հասաւ
ինձ տաճարի գաւթում: „Ave Maria“ ի զանգա-
կահարութիւնը զարթեցրեց իմ մէջ երեխայա-
կան յիշողութիւններս. ես զգացի ջերմ աղօթ-

~~քի ծաղաւ և ներս մտայ տաճարը: Որքան տա-~~
~~րի է ես չեմ աղօթել... և այսօր...~~

ՄՕՆՍԻՆԻՐ

Որքան տարի՞. այդ լաւ չէ: Փառք Աստու-
ծոյ, որ դուք մեզ մօտ եկաք. ձեր հոգւոյ հա-
մար մենք կ'հոգանք:

ԿՕՐՐԱԴՕ

Ոչ. արդէն ես ինքս կ'հոգամ իմ հոգւոյ
համար:

ՄՕՆՍԻՆԻՐ

Եթէ ձեր հոգին տկար է՝ ես կաշխատեմ
բըժշկել:

ԿՕՐՐԱԴՕ

Բժշկե՛լ. չեմ հաւատում: անկարելի է,
մօսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ինչո՞ւ... եթէ մարդս կ'ըզայ խղճի խայ-
թոյ...

ԿՕՐՐԱԴՕ

Խղճի խայթոյ...

ՄՕՆՍԻՆԻՐ

Ինչո՞ւ այդպէս դողացիք դուք: Դադա-
րեցէք: Հանգստացէք իմ որդի:

ԿՕՐՐԱԴՕ

Հանգստանա՛լ, Խղճի խայթոյ... Դուք ինձ
յանցաւո՛ր էք կարծում:

ՄՕՆՍԻՆԻՐ

Բոլորովին ոչ. բայց և այնպէս դուք կա-
րող էք միանգամայն ապաւինել ինձ: Դուք մի-
անգամայն ապահով դրութեան մէջ էք այստեղ.
մեր վաճառում ամեն ոք, նաեւ փախստականները
իրաւունք ունեն ապաստան գտնելու. ուրեմն
և այդպիսիները, քանի որ այս պատերի ներ-
սումն են, միանգամայն անվտանգ են և ազատ:

ԿՕՐՐԱԴՕ

Ես այդ գիտէի:

ՄՕՆՍԻՆԻՐ

Հէնց այդ պատճառով էլ մտաք այստեղ:

ԿՕՐՐԱԴՕ

Ես ձեզ արդէն ասացի, որ կարօտութիւն
ունեմ միայն գիշերելու այստեղ: Թոյլ կտա՞ք
ինձ թէ ոչ:

ՄՕՆՍԻՆԻՐ

Այ՛ո, որդիս. այո: Ես տեսնում եմ, որ ձեզ
ուզանել է վիշտը, բայց ո՛չ յանցանքը և կ'ցան-
կայի օգնել ձեզ: Ձեր երեսը, թէեւ վատտակած,
գուցէ զրկանքներից, բաւականաչափ հաւատա-
ցընում է ինձ, որ ձեր դրութիւնը այնքան
ցած չէ, որքան ցոյց է տալիս ձեր հագուստը:

ԿՕՐՐԱԴՕ

Այ՛ո, ես լեռնաբնակներից չեմ... զժբախ-
տաբար... Թէեւ ես մեծ կարողութիւն չեմ ու-
նեցել, բայց զբաղվում էի ազնիւ գործով:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ի՞նչ գործով:

ԿՕՐՐԱԴՕ

Նկարչութեամբ:

ՄՕՆՍԻՆԻՐ

Դուք Սիցելիացի՞ եք:

ԿՕՐՐԱԴՕ

Նրբեմն էի:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ընտանիք ունի՞ք:

ԿՕՐՐԱԴՕ

Ունէի:

ՄՕՆՍԻՆԻՐ

Հիմա միայնակ եք:

ԿՕՐՐԱԴՕ

Միայնակ... Ա՛խ, վայ ինձ, եթէ... Բաւա-
կան է, մօնսինիօր, ինձ միայն մի յոյս է մնա-
ցել, թողէք ինձ այդ յոյսը: Դուք ինձ, ինչպէս
դատաւոր հարցութիւրձ էք անում. դուք ինձ
վախեցնում եք. — դադարեցէ՛ք: Ես խնդրեցի
հանգիստ իմ մարմնիս համար և ձեզ իրաւունք
չտուեցի իմ հոգիս տանջելու: Վերջապէս առ-
անձին կարեւորութիւն չկայ ձեզ իմանալու իմ
մարին սորանից աւելի: Ես ձեզանից մի գիշեր
եմ միայն խնդրում. իսկ վաղը զարթնելով,
դուք ինձ չէք գտնիլ: Դէ, մօնսինիօր, ես խըն-
դրում եմ միայն յարգ, որի վերայ քնել կա-

րողանամ, մի կտոր հայ և մի բաժակ ջուր, որ
ածեմ երակներիս մէջ բորբոքուած կրակի վե-
րայ. դորանից աւելի ինձ ոչինչ հարկաւոր չէ:

ՄՕՆՍԻՆԻՐ

Ի՞նչ էք ասում, ի՞նչ: Մենք ձեզ կընդու-
նենք ինչպէս հարկաւորն է: Բայց որովհետեւ
ես կամենում եմ ձեզ աւելի հաստատ օգնու-
թիւն հառցնել. ուստի կ'ցանկայի իմանալ թէ
այս տեղից ո՛ւր էք մտադիր գնալու:

ԿՕՐՐԱԴՕ

Էտնայի մօտերը, Կատանիա քաղաքը:

ՄՕՆՍԻՆԻՐ

Եթէ ես ձեզ աւելի մօտ ճանաչէի, ես ձեզ
կարող էի ուղարկել...

ԿՕՐՐԱԴՕ

Շնորհակալ եմ:

ՄՕՆՍԻՆԻՐ

Դուք առաջին անգամն էք այնտեղ գնում:

ԿՕՐՐԱԴՕ

Ես այնտեղ ծնուել եմ:

ՄՕՆՍԻՆԻՐ

Այդ դէպքում, վերջին հարց ևս. դուք
ճանաչում էիք Կատանիայում մի երիտասարդ
մարդու, Ֆերդինանդօ Մերանօյին:

ԿՕՐՐԱԴՕ

Կարծես մտաբերում եմ... բայց որքան ժա-
մանակ է... նա իրաւաբանութիւն էր ուսանում:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իսկ և իսկ:

ԿՕՐՐԱԴՕ

Այ՛ո, մենք ծանօթ էինք, մինչև անգամ բարեկամ էինք:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Բարեկամ էի՞ք: Ուրեմն ես ձեզ համար օգտակար կ'լինեմ: մինչև անգամ ձեր կամքի հակառակ էլ: Գիտացէք, որ այդ Ֆերդինանդօն իմ եղբորս որդին է և հիմայ էլ այստեղ է:

ԿՕՐՐԱԴՕ առաջադասութեամբ:

Այստե՞ղ... բայց ի՞նչ ինչ: Ինչ միայն հանգիստ է հարկաւոր և ես երրորդ անգամ խընդրում եմ ձեզ տուեցէք ինչ գիշերելու տեղ թէկուզ շան բնում:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Սպասեցէք մի փոքր: Եղբորս որդին շատ ուրախ կ'լինի ձեզ տեսնելու. ես նորան կանչել կտամ:

ԿՕՐՐԱԴՕ

Ինչ ոչ որ հարկաւոր չէ. — ես չեմ ուզում նոր հարցութիւն լսել. ինչ ձերն էլ բաւական էր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ի՞նչ արած: Թէև դուք չէիք կամենալ, բայց ներեցէք ինչ: (Զանգակ. ներս է գալիս Գայեանո): Ասա եղբորս որդուն որ իսկոյն այստեղ գայ. նորա կատանայի բարեկամը կամենում է տես-

նել իրան: (Գայեանոն գնում է):

ԿՕՐՐԱԴՕ

Մօնսինիօր, մի փոքր խղճացէք ինչ: Դուք տեսնում էք թէ ինչ դրութեան մէջ եմ ես. ինչո՞ւ էք ենթարկում ինչ հարցերի, ամօթի... Ո՛րքան թանգ է նստում ինչ ձեր ողորմութիւնը: Բայց և այնպէս ամեն մի ողորմելի մարդ ունի իւր հպարտութիւնը: Աստուած իմ, ես տեսնում եմ, որ ընկել եմ ինկվիզիցիայի դատարանի մէջ, ես գնում եմ: (Կանչում է Գնալ):

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Կանգնեցէք, խնդրում եմ: Եթէ դուք ինչ չատէիք, որ ծնուել էք Ետնայի ստորոտում, ես իսկոյն կ'հասկանայի, այդ ձեր զայրոյթը տեսնելով: Լաւ չէ. հանգարտեցէք, բարեկամս, այդ տեսակ բնաւորութիւնը միշտ կարող է վնասել ձեզ, մինչև անգամ հասցնել ձեզ և յանցանքի:

ԿՕՐՐԱԴՕ

Յանցանքի: (Հանդարտում է և յեղիւմ ախարհէ): Այո, ճշմարիտ է:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես ձեզ թողնում եմ եղբորս որդու հետ: Նա, կարծես, գալիս է:

ԿՕՐՐԱԴՕ

Ինչպէս կամենաք:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Նորա հետ աւելի ազատ կ'լինէք: (Գնալ):

Կիսաբի՞ արդեօք իմ նախազգացմունքս, թէ ոչ:
(Գնո՞մ է ալ):

ԿՕՐՐԱԴՕ

Վ Կան այնպիսի խօսքեր, որոնցից սառչում է
տրիւնս: Ի՞նչ ասեմ ես նորան: Ի՞նչ է ասելու
նա ինձ... Ախ, գուցէ նա ինձ ցոյց կտայ հեռ-
քեր... Եթէ միայն նոքա երկուքն էլ կենդանի
են՝ ես կթափառեմ այնքան, մինչև նորանց գրա-
նեմ... Իսկ եթէ նոքա արդէն հողումն են, ես
էլ նորանց հետ... Ես ունեմ ուղի՞ղ միջոց,
հնարք, նոցա հետ յաւիտեան միանալու հա-
մար, և այդ գեղը միշտ ինձ հետ է: (Ներսէս
Տրեման: Դ. Ֆերնանդո և Գալէրանդ):

ՏԵՍԻԼ 4.

ԿՕՐՐԱԴՕ, Դ. ՖԵՐՆԱՆԴՕ, ԳԱՅԷՏԱՆՕ

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ Ներսէս Գալէրանդ:

Բայց ո՞ւր է մօնսինիօրը:

ԳԱՅԷՏԱՆՕ

Դուրս գնաց, որ ձեզ մենակ թողնի ձեր
բարեկամի հետ. ահա նա:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ Վարդանանք Նայոմ է Կերրադայի
հագոսարին:

Սա է:

ԳԱՅԷՏԱՆՕ

Այո. ես ձեզ թողնում եմ: Եթէ հարկաւոր
լինի կանչեցէք ինձ: (Գնո՞մ է):

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Մի ինչ լեռնաբնակ է... Ձեմ կարողանում
մտաբերել... (Մօպէնալը Կերրադային). Բայց ո՞ր-
տեղ ենք բարեկամ, ծանօթացել մենք:

ԿՕՐՐԱԴՕ

Կատանիա քաղաքում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Վաղո՞ւց է:

ԿՕՐՐԱԴՕ

Վաղուց:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ Վարդանանք Նայելը:

Կարծես թէ մտաբերում եմ... կարծեմ...

ԿՕՐՐԱԴՕ

Է՛, ի՞նչ երկարացնենք: Ես—Կօրրադօն եմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Կօրրադօ... Այո, այո... Գրկեցէք ինձ...
երազ չէ՞ արդեօք: Ինչպէս փոխուել էք:

ԿՕՐՐԱԴՕ

Իսկ դուք բոլորովին Շատ պարզ է. դուք
տանջուել չէք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Դուցէ: Միւսնոյն ժամանակ այս օտարօտի
հագոսար... Ի՞նչպէս է պատահել...

ԿՕՐՐԱԴՕ

ձակատագրիս զարհուլի հարուածները...

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Հասկանում եմ... գիտեմ:

ԿՕՐՐԱԴՕ Խնչ:

Խնչ գիտէք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ ՂԷՆՆԱՆԼԷ:

Համարեա ոչինչ... Գիտեմ որ դուք տան-
ջուել էք... Հարկաւոր է միայն նայել ձեզ Վե-
րայ... (Առանցիկ) Ձգիտեմ թէ ինչպէս սկսեմ ես
սորա հետ:

ԿՕՐՐԱԴՕ

Ինչի՞ վերայ էք մտածում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այս օտարօտի պատահմունքի վերայ: Կա-
ր՞ող էի երբ և իցէ կարծել, որ ես ձեզ հետ
կ'հանդիպեմ այստեղ, իմ հօրեղբորս մօտ, Ապէ-
նինների ստորոտում... Դէ պատմեցէք ինձ գո-
նէ: Ո՞րտեղ էիք դուք: Ո՞րտեղից էք գալիս:

ԿՕՐՐԱԴՕ

Ես չգիտեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Է՛, այդ բոլորովին զարմանալի է: Բայց,
ներեցէք. ես յիշում եմ որ երբ ես Կատանի-
այից գնացի Հռոմ, դուք ամուսնացած էիք:

ԿՕՐՐԱԴՕ

Այ՛ո, էի:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Եւ ձեր կինը, որքան յիշում եմ ես, շատ
սիրելի և գեղեցիկ կին էր...

ԿՕՐՐԱԴՕ

Այ՛ո, գեղեցիկ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ապա ո՞ւր է նա հիմա մեզ՞ է:

ԿՕՐՐԱԴՕ: Գոյաւ սրտ մ մի

Մեծայոյս եմ, որ ոչ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Դուք մեծայոյս էք... Բայց ինչպէս թէ...
Մի՞թէ դուք բաժանուել էք: Բաժանուել էք:

ԿՕՐՐԱԴՕ

Բաժանուել ենք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Խնչ պատճառով:

ԿՕՐՐԱԴՕ: Գոյաւ սրտ մ մի

Սարսափելի:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Սարսափելի՞: Կար՞ող եմ ես իմանալ:

ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Դուք մտածում էք Կատանի՞ն ուղևորուել:

ԿՕՐՐԱԴՕ

Այո:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Երբի դուք յոյս ունէք այնտեղ ձեր կինը
գտնել:

ԿՕՐՐԱԴՕ

Եւ աղջիկս:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Եւ աղջիկդ: (Զարմացած):

ԿՕՐՐԱԴՕ

Այ՛ո, իմ Աղայիս, որին ես չեմ տեսել տա-
սըն և չորս տարի: Ես կուզէի իմանալ մի բանի
տեղեկութիւններ նորանց մասին, բայց դժբաղ-
դաբար, դուք չգիտէք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Քիչ ու միչ գիտեմ:

ԿՕՐՐԱԴՕ

✓ Ի՞նչ էք ասում: Նոքա կենդանի՞ են: Ասա-
ցէք շուտով: Նոքա Կատանիայու՞մն են:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այսինքն... Ահա ինչ, բարեկամ: Ես կարող
եմ տեղեկութիւն տալ մի փոքր ձեր կնոջ մա-
սին... իսկ ազջկադ...

ԿՕՐՐԱԴՕ

Նա մօ՞ր հետ է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ե՛, ոչ:

ԿՕՐՐԱԴՕ

Դուք Բօզալիային տեսել է՞ք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ես նորան տեսել եմ իսկ եթէ դուք կա-
մենում էք կրկին միանալ նորա հետ...

ԿՕՐՐԱԴՕ

Ել ինչ՞ու համար եմ թափառում ես:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ուրեմն մնացէք:

ԿՕՐՐԱԴՕ

Մե՞ամ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Բօզալիան այստեղ է բնակվում:

ԿՕՐՐԱԴՕ Կատանիայու:

Այստե՞ղ է Բօզալիան: Դուք ինձ չէ՞ք իա-
րում:.. Եւ ես այսպէս շուտ գտայ նորան:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Աստուած իմ, դուք վ՛ատ էք զգում: Ես
շտապեցի:

ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ, ոչինչ... իմ ջղերս թուլացած են... Բօ-
զալիա: Բայց Աղայն:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ես ձեզ ասում եմ, որ աղջիկդ նորա հետ չէ:

ԿՕՐՐԱԴՕ

Դուք համոզու՞ած էք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Միանգամայն:

ԿՕՐՐԱԴՕ

Աստուած իմ, Աստուած իմ: Նա մեռել է.
որքան քնքոյշ էր նա... Նեղութիւնը, քաղցը,
ծովութիւնը սպանել է այդ թոյլ մարմինը... Զուր
է բոլորը... Ես նորան չեմ տեսնելու:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ո՞վ գիտէ: Դուցէ նա մի որեւէ տեղ ու-
սանելու է տուած: Հանգստացէք. ամեն ինչ կի-
մանաք Բօզալիայից:

ԿՕՐՐԱԴՕ

Այո, ճշմարիտ է. նա դեռ կարող է կենդանի լինել... ինչու վհատուել: Ինձ չափազանց հարկաւոր է որ նա կենդանի լինի: Դէ, տարէք ինձ Բօղալիայի մօտ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այդպէս շուտ չէ կարելի... այսպէս անըստապելի, գիշերով, ոչինչ չիմացած...

ԿՕՐՐԱԴՕ

Այո, դուք իրաւացի էք: Ես դեռ պէտքէ իմանամ, շատ բան իմանամ, Դօն Ֆերնանդօ, Ուզո՞ւմ է արդեօք Բօղալիան ինձ տեսնել... Զի՞ մոռացել արդեօք ինձ... Օ, ոչ, անկարելի է, այս կերպարաբովս ես նորան կ'վախեցնեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Կ'վախեցնէ՞ք... Դուք այնքան տաք սիրում էիք իրար... իսկ սէրը ներում է ամեն ինչ:

ԿՕՐՐԱԴՕ

Ամէ՞ն ինչ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ի հարկէ, ամեն ինչ... Աւելացրէք նաև թէ Բօղալիան որքան բարի էր...

ԿՕՐՐԱԴՕ

Բարի՞ է արդեօք նա և այժմ: Մտաբերո՞ւմ է արդեօք նա ինձ: Դուք չգիտէ՞ք: Մէկ հարց ևս — Բօղալիան խղճուածեան, աղքատութեան

մէջ է—այնպէս չէ՞: Ինչո՞վ է նա ապրում: Ի՞նչպէս է նա ապրում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Դաստիարակչուհու պաշտօնով:

ԿՕՐՐԱԴՕ

Դաստիարակչուհու: Իմ կի՛նս Ո՛ւմ մօտ է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Մի շատ յարգելի անձնաւորութեան մօտ:

ԿՕՐՐԱԴՕ

Կի՛նարմատի՞ մօտ է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ո՛չ: Տղամարդի մօտ է, բժիշկ Արրիգօ Պալմիրի... նա մի աղջիկ ունի... մի շատ դուրեկան աղջիկ:

ԿՕՐՐԱԴՕ

Կին ունի՞ նա:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այրի է:

ԿՕՐՐԱԴՕ

Այրի՞... Քանի՞ տարեկան է:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Երեսուն և վեց:

ԿՕՐՐԱԴՕ

Դեռ ջահել է... Եւ Բօղալիան նորա աղջկայ դաստիարակչուհի՞ն է: Մի՞այն դաստիարակչուհի:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այո՛, ես գորանում համոզուած եմ:

ԿՕՐՐԱԴՈ «ԵՂԵՂԸ ՆՈՐԱ ՅԵՄԷ»:

Ննորհակալ եմ, Դօն Ֆերնանդօ: Բայց այս-
քան ժամանակ... Ախ, օղալիան դեռ 19 տա-
րեկան էր, երբ ես նորան թողեցի:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ի՞նչ էք ուզում ասել գորանով:

ԿՕՐՐԱԴՈ

Դուք հարցնում էք: Փառք Աստուծոյ, որ
մեռեալների քունը յաւիտեանական է... Վա՛յ...
եթէ նորանք կրկին կարողանային զարթնել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այդ ի՞նչ օտարօտի մտքեր են:

ԿՕՐՐԱԴՈ

Այնքան օտարօտի չեն, բարեկամս. լաւ կը-
լինէր որ ես յաւիտեան քնէի:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ես չեմ հասկանում, երգիւում եմ... բայց
և այնպէս միսթարուեցէք. օղալիան դար-
ձեալ ձեր կիներն է և ձեզ հետ կգնայ, ուր որ
կամենաք:

ԿՕՐՐԱԴՈ

Ինձ հետ կգայ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Համոզուած եղէք: Ես կարծում եմ, որ
դուք նորա հետ կարող էիք գնալ Կատանիա,
նորա ընտանեաց...

ԿՕՐՐԱԴՈ

Ի՞նչ ընտանիք:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Մի՞թէ օղալիայի ծնողները մեռած են:
Բայց, գուցէ, նորա եղբայր, Ալօնզօն կենդանի է:
ԿՕՐՐԱԴՈ

Ալօնզօ: Ինչ անուն տուեցիք դուք... Ա-
լօնզօ: (Ընկնա՛մ է ախա՛ն լէրայ, և ծածկո՛ւմ է երե-
ւոյ յեւեբով):

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Կօրրադօ, ի՞նչ պատահեց ձեզ: Ես չեմ
հասկանում... ես չգիտեմ, թէ ինչ ասեմ...
(Ներս է գալիս Մօնիմիօրը):

ՏԵՍԻԼ 5.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Այստեղ համեցէք, մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դէ՛, ո՞վ է քո այդ բարեկամը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՈ

Ո՞վ է սա... ներկայացնում եմ ձեզ օղա-
լիայի ամուսնուն:

ՄՕՆՍԻՆԻՕՐ յնչա՛մով:

Ինչ ես ասում դո՞ւ... Ախ, եթէ այդ ճըշ-
մարիտ լինէր: Բայց օղալիայի ամուսինը դա-

տապարտուած է յաւիտենական բանդարկու-
թեան նէապօլի բանդերում:

ԿՕՐՐԱԴՕ լէր Ռուսիա:

Ձեզ ո՞վ է ապել, մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ուրեմն այդ դո՛ւք էք... Բայց ինչպէս:
Դուք ներու՞ած էք: Ճշմարիտն ասացէք, դուք
այստեղ վախենալու ոչինչ չ'ունէք...

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Մենք ձեզ կազատենք, ինչ որ էլ լինելու
լինի: Դուք փախե՞լ էք:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ասացէք. նոյն իսկ ձեզ համար է լաւ:

ԿՕՐՐԱԴՕ

Այ՛ո, աւելորդ է կեղծելը. ես փախայ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դուք իմ կամքս կատարեցիք. որովհետեւ,
իմացէք, սիրելիս. Բօզալիայի անյարմար, դժ-
բաղդ, երկիւղալի դրութիւնը՝ այն աստիճան ազ-
դել է ինձ, որ ես վճռեցի, թագուհու խոստո-
վանահօր միջնորդութեամբ, ձեր ազատութեան
համար ինդրել. ըստ երեւոյթին ես կարող էի
այդ յաջողեցնել: Ձեր փախուստը իմ նախագը-
ծերս չի քանդիլ: Պատմեցէք ինձ մանրամասնօ-
րէն ամեն ինչ, ինչ որ գէպի ձեր դժբաղդու-
թեանն է վերաբերում, այն ժամանակ ինձ ա-
ւելի հեշտ կ'լինէր ձեր ազատութեան համար

աշխատել: Դէ՛, համարձակ եղէք: Պատմեցէք
ամեն բան: Յետոյ մենք քեզ կուղարկենք հան-
գստանալու և վաղը դուք կ'կարողանաք մի գե-
ղեցիկ ընծայ լինել ձեր կնոջ համար, որը, ի
հարկէ, ձեզ չէր սպասում... Ես այժմէն իսկ
նորա տեղ ուքախանում եմ:

ԿՕՐՐԱԴՕ

Ե՛հ, նորոգել վերքերս... Դօն Ֆերնանդօ,
ես ձեզ արգէն պատմել եմ թէ ինչպէս ամուս-
նացայ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Շատ քիչն է առել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ես ինքս էլ քիչը գիտէի: Ես յիշում եմ
միայն, որ դուք խելագարութեան չափ սիրում
էիք Բօզալիային, որ նա նոյնպէս սիրում էր
ձեզ իւր ծնողները կամքի հակառակ, որոնց
դուր չէր գալիս ձեր բուռն զգացմունքները,
ձեր խստասիրտ, յանդուգն բնաւորութիւնը, որ
դուք առանց այլեւայլութեան երկար ու բա-
րակ չմտածելով, մի գեղեցիկ գիշեր փախցրե-
ցիք Բօզալիային և պսակուեցիք նորա հետ:
Ահա, ինչ որ գիտեմ: Յետոյ ես Կատանիայից
հեռացայ, և այնուհետեւ թէ ի՞նչ է պատահել
— յայտնի չէ ինձ:

ԿՕՐՐԱԴՕ

Դորանից յետոյ աւելի վատթարացան հան-
գամանքները: Ներկայացնում եմ ձեզ նորա ծը-

նողները և տխրութիւնը և զայրոյթը: Իմ կի-
նըս ունէր մի եղբայր, Ալօնզօ անուանով: Նա
կարողացաւ համոզեցնել իւր հօրը, բայց ոչ
յօգուտ իմ: Ազնիւ ծերունին ուրախութեամբ
ներում էր աղջկան, եթէ նա ինձ թողնէր: Բօ-
ղալիան արդէն մի սիրուն աղջիկ ունէր. ոչ
խորհուրդները, ոչ խնդիրները, ոչ սպառնա-
լիքները չ'կարողացան նորան տատանել. այն ժա-
մանակ խորհեցին Բօղալիային ինձնից յափշտա-
կելու, և Ալօնզօն իւր վերայ թողեց այդ գոր-
ծը: Բացի այդ բամբասում էին, մատնում էին
ինձ կառավարութեանը, ներկայացնում էին ինձ
որպէս մի կասկածելի անձնաւորութիւն... Ես
այդ բոլորը գիտէի և սպասում էի դիմաւորե-
լու փտանգին: Մի գիշեր ես նկատեցի, որ մի
մարդ գողտուկ կերպով մօտենում է իմ տա-
նըս. — ես թագնուեցի տան անկիւնում և յան-
կարծ նորա ճանապարհը բռնեցի: Դա Ալօնզօն
էր: Եթէ մի փոքր խելօք լինէր, պէտքէ իս-
կոյն փախէր ինձնից, բայց նա կանգնեց և ըս-
պառնացաւ: Ի՛նձ, ի՛նձ, սպառնալ: Դժբաղդ:
Արիւնս գլուխս խփեց, երակներս ձգուեցան:
Ես նորան տեղծուտեղը սպանեցի...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Շարունակեցէք, տարաբաղդ:

ԿՕՐՐԱԴՕ

Դեռ խելքս գլուխս չեկած՝ ես արդէն կա-

լանաւորութեամբ էի գիշերային պահապաններով
նոյն փոքր ուժի տեղում: Ռատաստանը կարճ է:
Ապացոյցը պատրաստի. ես խելագարութեամբ պէս
գիմադրում էի ոստիկանութեան. ես արդէն ա-
ռաջուց կասկածելի անձնաւորութիւն էի. — այս
բոլորը մեծացնում էր իմ մեղքս: Ինձ դատա-
պարտեցին յաւիտենական բանդարկութեան:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես կարծում եմ որ դատաւորները կարող
էին գտնել մի քանի թեթեւցնող հանգամանե-
րներ նոյն խոկ ձեր բնաւորութեան մէջ:

ԿՕՐՐԱԴՕ

Գուցէ. ես, ճշմարիտ որ, երբէք չէի կա-
րող սանձել ինձ. արատը — իմ արիւնիս մէջն է:
Ցասն և չորս տարուայ բանդարկութիւնը մի-
այն լեզի էր աւելացնում երակներիս մէջ, կա-
րող էք ձեզ երեւակայել թէ ես ինչ պէտքէ զգայի:
Ես 28 տարեկան էի, ես նկարիչ էի, ամուսին,
հայր և ես, ինչպէս գազան, փախուած էի եր-
կաթեայ վանդակում: Երեւակայութիւնս կրր-
կընապատկում էր իմ չարչարանքս. ես ինձ ներ-
կայանցնում էի Բօղալիային, միայնակ, արհա-
մարհուած, աղքատ... բայց ջահել և գեղեցիկ:
Ինչով նա պէտքէ ապրէր: Կամ ողորմութիւնով
կամ խայտառակութիւնով: Ես մռնչում էի և
գիւհահարվում նախանձիցս. ինձ պատժում էին
կատաղութեանս համար... Ես թողեցի իմ Ադա

աղջկանս, — նա դեռ երկու տարեկան հաղիւ
լինէր, հիւանդ, գունաթափ, մոմից շինած հը-
րեշտակի նման: Երբեմն ինձ ներկայանում էր, որ
Ադաս պարկած է դագաղում չորս կողմը ծա-
ղիկներով շարուած... երբեմն քրձով ծածկու-
ած, մօր ձեռքերի վերայ մեկնում է իւր փոք-
րիկ թաթիկները անց ու դարձ անողներին. շատ
անգամ ես տեսնում էի, որ նա գեղեցիկ հագ-
նուած վազիվում է, թուչկոտում է մի հա-
րուստ տան մէջ, թափում է որդիական գգու-
անքներ և փաղաքշանքներ հարուստ սինիօրին,
իւր մօր սիրեկանին... Այս վերջին յամառ միտ-
քը, այս սարսափելի երազը հասցնում էին ինձ
հիւանդութեան ցնորքների:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Հաւատում եմ: Եւ ճշմարիտ, եթէ երեւա-
կայութիւնը ձեզ չխաբէր... Ախ, ողորմելի...
բայց յետոյ:

ԿՕՐՐԱԴՕ

Յետոյ մտածեցի փախչել: Նարունակ մը-
տաւոր լարուածքից ես տկարացայ երկարատե-
ջերմով: Վերակայուն տեղափոխեց ինձ մի ու-
րիշ բնակարան, որը աւելի լաւն էր: Ես առող-
ջացայ, բայց գիտութեամբ ինձ տկար էի ձեւա-
ցրնում, որպէս զի ինձ վերայ աւելի քիչ ու-
շագրութիւն դարձնեն: Այդպէս էլ եղաւ Պէտ-
քէ իմանալ, թէ ինչպէս սրվում են բանդար-

կուածի բոլոր ընդունակութիւնները: Ինձ յա-
ջողունեց շարունակ և անսպասելի ոյժերով շար-
ժել լուսամուտի վանդակը. յետոյ մնում էր
հանել միայն: Ես իջայ բանդի բակը, յետոյ դաշ-
տը...

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Նա'տ գեղեցիկ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Երեւակայում եմ թէ ինչ կ'զգայիք աղա-
տութեան մէջ:

ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ, չէ՛ք կարող: Պէտքէ 14 տարի թաղու-
ած լինել. պէտքէ համարել այդ երկայն տարի-
ները, համարել ժամերը, ծարաւել աղատու-
թիւն, ընտ'անիք, օ՛դ, արեգակ: Ինձ թուաց
թէ ես կենդանացայ: — Ես ամբողջ գիշեր գը-
նում էի. առաւօտեան դէմ ծածկուեցայ ձո-
րում: Մի բարի մարդ տուեց ինձ այս հագուս-
տը, մէկ ուրիշ աւելի հարուստը, տուեց մի
քիչ փող, և այդպիսով Ապէնիւնների ստորո-
տով հաղիւ հասայ այստեղ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Նախախնամութիւնը ձեզ բերել է ուղիղ
ձեր կնոջ մօտ...

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Համարձակ, բարեկամ:

ԿՕՐՐԱԴՕ

Օ՛, ինձանում շատ համարձակութիւն կար,

Լ այժմն էլ դէռ մնացել է... բայց երբ իմացայ, որ իմ Ագաս իւր մօր հետ չի այդ բժշկի մօտ...

ՄՕՆՍԻՆԻՍԻ

Ձեր Ագան... Սպասեցէ՛ք... Դատելով ձեր խօսքերից, աղջիկը պէտքէ 16 տարեկան լինի...

ԿՕՐՐԱԴՕ

Այո:

ՄՕՆՍԻՆԻՍԻ

Այդ այն աղջկայ տարիքն է, որի մօտ Բողալիան դատարարակշուհի է: Բայց դուք ինքըներդ դատեցէք, Պալմիերիի օրինաւոր աղջիկը վաղուց է մեռած...

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Մի՞թէ:

ՄՕՆՍԻՆԻՍԻ Բարեկամս:

Ահա նորա մահուան վկայականը. ես ներկայացրեցի բժշկին և...

ԿՕՐՐԱԴՕ Բարեկամս:

Բայց ո՞վ է այդ աղջկայ մայրը:

ՄՕՆՍԻՆԻՍԻ

Է՛, այդ...

ԿՕՐՐԱԴՕ

Ձեր հոգւոյ փրկութեան սիրոյ համար, ճշմարիտն ասացէք:

ՄՕՆՍԻՆԻՍԻ

Տէր Աստուած իմ, ինչպէս տաք բնաւո-

րութիւն ունէք դուք... գտնել մարդկանց մէջ վատութիւն—իմ կանոնից դուրս է: Բայց ես կամենում եմ ասել, որ այդ կասկածուած աղջիկը ձեր Ագան չէ՞ արդեօք...

ԿՕՐՐԱԴՕ

Ագան:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այ բան... Այդ անկարելի է:

ՄՕՆՍԻՆԻՍԻ

Ի՞նչպէս իմանանք: Ձանաղան ենթադրութիւնների հաշիւում այս խորհրդաւոր գործի պարզաբանութեան համար...

ԿՕՐՐԱԴՕ

Որ իմ Ագաս հայր անուանէր ուրիշի՞ն: Սիրէր ուրիշի՞ն... Ուրեմն իմ երեւակայութիւնս դժոխային ցնորքներ չէին...

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Հաւատացէք ինձ, որ դուք մոլորվում էք:

ՄՕՆՍԻՆԻՍԻ

Չունի՞ արդեօք մի որեւէ նշան, որով կարելի լինէր ճանաչել ձեր աղջիկը:

ԿՕՐՐԱԴՕ

Ախ: Ի՞նչ նշան: Ես ձեզ ասում եմ որ նա երկու տարեկան էր, երբ ես նորանից հեռացայ:

ՄՕՆՍԻՆԻՍԻ

Այո, իհարկէ... բայց հօրը հարկաւոր չեն նշաններ, ինքը բնութիւնը...

ԿՕՐՐԱԴՕ

Այ՛ո, սիրտս ինձ կասի... Բայց 14 տարի...

ՄՕՆԱԻՆԻՕՐ

Հարցու փորձ արէք Բօղալիային, ինչպէս
մայր՝ նա ձեզ կը պատասխանի աղջկայ կողմից
և ինչպէս կին՝ ինքը իւր կողմից:

ԿՕՐՐԱԴՕ

Իւր կողմից...

ՄՕՆԱԻՆԻՕՐ

Այդ ձեր իրաւունքն է:

ԿՕՐՐԱԴՕ

Իմ իրաւունքը: Չգիտեմ մօնսինիօր. կա-
սեմ միայն այս. թէ որպիսի բուռն ցանկու-
թեամբ կուզէի տեսնել Բօղալիային, թէ ինչեր
չարեցի ես նորան տեսնելու համար... Բայց
այժմ, քանի որ մօ՛տ եմ նորան, — ես պատրաստ
եմ կրկին փախչել բանդը:

ՄՕՆԱԻՆԻՕՐ

Ինչո՞ւ:

ԿՕՐՐԱԴՕ

Չգիտեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Համարձակ, Կօրրադօ: Դուք շատ յուզ-
ված էք, շատ թոյլ էք: Ձեզ հարկաւոր է հի-
մայ մի լաւ ընթրիք անել և հանգստանալ:

ՄՕՆԱԻՆԻՕՐ

Իսկ դու հոգ՛ա ինչպէս յարկն է՝ և դորա
և միւսի մասին: Յետոյ վաղը... Մի վըհա-

տուէք, մեծ է Աստուածային ողորմութիւնը:

ԿՕՐՐԱԴՕ

Իսկ արդարադատութիւնը... Աստուածա-
յին ողորմութիւնը թէ արդարադատութիւնը
քարշեց ինձ այսպեղ... Դո՛ւք վաղը կիմանաք
ամեն բան: (Դնո՛ւ է Դ. Ֆերնանդոյի հէտ):

ՄՕՆԱԻՆԻՕՐ

Վաղն առիւծը նոր ոյժերով... և մենք,
սինիօր բժիշկ, կ'սօսենք ձեզ հետ: (Դնո՛ւ է):

Վարագոյ:



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Առաջին գործողութեան տեսարանը:

ՏԵՍԻԼ 1.

Գալիս են՝ ՄՕՆՍԻՆԻՕՐ, յետոյ ԱԳԱՏԱ

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Գոնէ այսօր բժիշկը տօնն է:

ԱԳԱՏԱ

Նո արգէն յայտնեցի մօնսինիօրին, որ այս ժամանակին, նա հիւանդներին այցելութիւն է անում: Նա շուտ չի վերադառնալ: Նա հիւանդներին բժշկում է և միւսնոյն ժամանակ նոցա հոգիները մոլորեցնում է իւր արած մըխիթարութիւններով:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ոչինչ. այդ շատ չի տեւիլ:

ԱԳԱՏԱ

Աստուած տայ: Դուք այսօր է՞լ կսպասէք նրան:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Է. չէ: Կանչիր ինձ մօտ այդ կնոջը:

ԱԳԱՏԱ

Իսկոյն: Ե՛րբ պէտքէ այս գայթակղութիւնները վերջանան:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Շատ շուտ:

ԱԳԱՏԱ

Ա՛խ, եթէ: (Գնւմ է յախ):

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Գայթակղութիւնը գուցէ տւեւանայ էլ: Այդ կախուած է նորանից, թէ ինչ կպատասխանի Բօզալիան: Դրաման կարող է վեջանալ էլ, բայց կարող է և նորից սկսուել: (Գնւմ է Բօզալիան):

ՏԵՍԻԼ 2.

ՄՕՆՍԻՆԻՕՐ և ԲՕԶԱԼԻԱ

ԲՕԶԱԼԻԱ

Դուք ինձ կանչել էք: Բայց արգեօք ինձ հետ էիք կամենում խօսել, գուցէ բժշկի՞ հետ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Երեկ ես նորա հետ բաւական խօսել եմ:

ԲՕԶԱԼԻԱ

Մինչև անգամ աւելի էլ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Գուցէ: Բայց դուք անհանգիստ մի եղէք. ես այլ ևս կարիք չունեմ ձեզ նախատելու. նա-

խախնամութեան շնորհիւ, ձեր այստեղ մշա-
լուն վերջ է հասել:

ԲՕԶԱԼԻԱ

Այո, ես գիտեմ որ մօնսինիօրը, իւր բա-
րեսրտութիւնից ստիպուած՝ հրամայել է բա-
րեգործիս՝ դուրս անել ինձ: Ես մինչև անգամ
կարող էի գանգատ անել ձեր վերայ տեղական
իշխանութեանը, կարող էի մի բառով, մի փը-
ջելով անգամ վերցնել ձեզնից կեղծ սրբութեան
գիմակը և ձեր երեսպաշտութիւնը բաց անել:
Դուք գիտէք, լաւ գիտէք, որ ես բարեգործ
եմ. երես առ երես ինձ հետ՝ պէտքէ խօստո-
վանէք դորանում: Դուք մինչև անգամ իրա-
ւունք չունէք նայել երեսիս այդպէս ուղի՛ղ ինչ-
պէս ե՛ս եմ ձեզ վերայ նայում:.. Այս յաղթու-
թիւնը ինձ բաւական է, մօնսինիօր... ես գի-
մագրել չեմ կամենում, ես չեմ կամենում վը-
նասել այն անձնաւորութիւններին, որոնք ինձ
համար շատ թանգ են... ես հեռանում եմ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դուք կարող էք հեռանալ, եթէ կցանկաք,
բայց արդէն ո՛չ միայնակ:

ԲՕԶԱԼԻԱ

Իսկ ո՞վ պէտքէ ճանապարհակցի:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ձեր մարդը:

ԲՕԶԱԼԻԱ

Անտեղի՛ հանաք, մօնսինիօր:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Բոլորովին՝ սիրելիս:

ԲՕԶԱԼԻԱ

Ձեզ արդէն յայտնի է թէ ինչ՝ խայտառակ
տեղ է գտնվում այն մարդը, որը, դժբաղդա-
բար, իմ ամուսինս է եղել:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Եղե՞լ: Նա հէնց հիմայ էլ ձեր ամուսինն
է, աղջիկս: Նա չկարողացաւ առանց ձեզ ապ-
րել. վերին աստիճան յուսահատութիւնից և
Աստուածային օգնութեամբ նա ջարդեց իւր
շղթաները... սա ձեզ համար բաւական չէ՞:
Որեմն ես ձեզ կասեմ, որ երեկ երեկոյից նա
ինձ մօտ հիւր է:

ԲՕԶԱԼԻԱ վերին աստիճան զարմացած:

Կօրրադօն... կարող է լինել... ճշմարիտ
է արդեօք...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այս տեսակ հանգամանքներում հանաք չեն
անիլ:

ԲՕԶԱԼԻԱ

Կօրրադօն այստե՞ղ... բայց ի՞նչպէս: Ի՞նչ-
չու համար: Ու՞մ է նա փնդուում:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իւր ընտանեացը:

ԲՕԶԱԼԻԱ

Իւր ընտանեացը:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այո: Բայց ես զարմանում եմ շփոթվում եմ տեսնելով թէ ինչ անբաւականութեամբ էք լըսում ինձնից այս նորութիւնը, որի մասին ես այնքան շտապում էի տեղեկութիւն տալ ձեզ. — ես ինքս որքան ուրախացայ: Մմեն կին, եթէ ձեր տեղում լինէր, ինձ շնորհակալութիւն կանէր:

ԲՕԶԱԼԻԱ

Ամեն կին, բայց ոչ ես:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դուք լաւ մտածեցէք թէ ի՞նչ էք ասում:

ԲՕԶԱԼԻԱ

Իսկ դուք դատելուց առաջ իմացէք...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես գիտեմ որ Կորրադօն ձեր եղբօրը ըսպանել է, բայց...

ԲՕԶԱԼԻԱ

Եւ դորանից յետոյ դուք կարող էք մտածել, թէ նա ընտանիք ունի: Որ ես նորա կի՛նն եմ: Որ ես պէտքէ նորա ետեւի՞ց գնամ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իհարկէ, ես այդպէս եմ մտածում: Ինձ օրէնքը ստիպում է այդպէս մտածելու: Ես հասկանում եմ, որ ձեր գրութիւնը թեթեւ չէ. 14

տարի ապրել առանց ամուսնու, միխթարութիւն գտնել... և յանկարծ յայտնվում է ձեր մարդը. այո, այնքան էլ դուրեկան չէ. բայց ի՞նչ արած՝ պէտքէ համբերել: Այդ բոլորից յետոյ աւելի լաւ է ձեզ ձեր ամուսնու հետ գընալ, քան թէ մենակ մնալ և խայտառակութեամբ:

ԲՕԶԱԼԻԱ

Լաւ է վերջինը:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դուք ընտրելու իրաւունք չունէք: Միթէ մոռացե՞լ էք, որ Կորրադօն նախանձոտ է և կատաղի...

ԲՕԶԱԼԻԱ

Նա ուզում է ինձ ուժով ստիպել...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Նա չի էլ մտածում — որովհետեւ նա շատ է սիրում ձեզ: Բայց և այնպէս հարկաւոր չէ չախմախին տալ, եթէ վախենում ես կայծերից: Փոխանակ նորան այստեղ սպասելու, դուք ինքներդ գնացէք նորա մօտ... կամ, աւելի լաւ է, գնանք միասին, ե՛ս ձեզ կտանեմ դէպի նորա գիրկը:

ԲՕԶԱԼԻԱ

Ե՛ս: Նորա գրկո՞ւմ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Լսեցէք: Հիմայ ձեր ամուսինը վախենալու ոչինչ չունի, այստեղ նորան չեն ճանաչում և

չեն էլ գտնիլ: Յետոյ ես նորան խոստացայ ներման իրաւունք ստանալու.— և այդ կ'յաջողեցընեմ անշուշտ: Մի ուրիշ երկնքի տակ դուք կարող էք բախտաւոր ապրել: Դուք հիմայ տեսնում էք որ չարութեան փոխարէն վերագարձընում եմ ձեզ բարութեամբ: Դէ՛, լսեցէք իմ խորհուրդս, գնանք:

ԲՕԶԱԼԻԱ Տրաքեւլէ:

Անկարելի է:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Զգուշացէք. նա ինքը կգայ. նա արդէն հեռու չէ:

ԲՕԶԱԼԻԱ

Հեռու չէ՞... Ն՞ա... Ախ, ոչ...

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Եւ դուք պարտաւորուած կլինէք նորա հարցերին, շատ հարցերին պատասխան տալու... օրինակ. ու՞մ աղջիկն է սա: Ի՞նչ եղաւ նորա փոքրիկ Ադան:

ԲՕԶԱԼԻԱ Վախէալլէ:

Աղ՞ան:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Իհարկէ, նա նորան սիրում է, ուզում է տեսնել նորան... Բայց և այնպէս ես շատ ուրախ եմ որ ձեզ կարողացայ զգուշացնելու: Կարճ ժամանակ է մնում որ դուք ձեր խըղճի հետ վերջացնէք և խօսակցութեան պատ-

րաստուէք, որը ի հարկէ, ձեզ համար շատ էլ հեշտ չի լինի.— և գուցէ ձեր խօսակցութիւնը փոխուի այնպիսի հարցերի, որ դատաւորն անում է մի յանցաւոր կնոջ: Մնաք բարեւ, սիրիօրա:

ԲՕԶԱԼԻԱ

Իսկ դուք ի՞նչ կասէք նորան:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Որ դուք անհամբեր ցանկանում էք նորան տեսնելու:

ԲՕԶԱԼԻԱ

Ոչ. լաւ է ասեցէք նորան, որ նա չգայ այստեղ, որ նա իմ դրութիւնս յարգի, որ նա խղճայ ինձի:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Այդ տեսակ յիմարութիւնը ի՞նչպէս էք խորհուրդ տալիս ինձ: Վիրաւորել առիւծին, երբ լսվում է նորա մռնչիւնը: Ոչ, լաւ մտածեցէք, սիրելիս, և պատրաստուեցէք նորան հեղութեամբ ընդունելու: (Գնա՛մ է):

ԲՕԶԱԼԻԱ Տրաքեւլէ:

Կօրրադ՞օն... Ես կտեսնեմ Կօրրադօյի՞ն... սա երազ չէ՞ արդեօք: Այն սարսափելի գիշերից յետոյ, այսքան տարիներից յետոյ՝ տեսնել նորան, խօսել նորա հետ: Այսօր: Այստե՛ղ: Օ՜... իմ ոյժիցս վեր է: Ես խօսք չեմ կարող գտնել նորա հետ խօսելու համար. համարձակութիւն

չեմ կարող ունենալ նորա երեսին նայելու: Մօն-
սինիօրը ճշմարիտ էր ասում: Նա շատ ու շատ
բաների համար հորցուփորձ կանի, և ինչպէս,
ի՞նչ երեսով ես նորան պատասխանեմ: Ի՞նչ ա-
սեմ աղջկանս համար: Այի՛նչ, թէ բոլորը: Դըժ-
բաղդաբար բժիշկն էլ տանը չէ, էլ ո՞ւմ հետ
խորհուրդ անեմ: Փախչեմ թէ թագնվեմ: Աւե-
լի վատ չի՞ լինի արդեօք: Վերջապէս իրաւունք
ունե՞մ արդեօք փախչելու, հեռացնելու նորան,
մերժելու նորան մխիթարութիւնից, որին նա
փնդուում է: Մի՞թէ ես նորան չեմ սիրել. մի-
թէ ես նորա հետ չփախայ իմ ծնողներէ: Ախ,
եթէ այս օտարօտի, սոսկալի դրութիւնը չը-
լինէր, որի մէջ դրուած եմ այժմ, ես բաց կա-
նէի իմ գիրկն նորա համար... բայց, Աստուած
իմ: Նա կգայ խլելու ինձնից, քարուքանդ ա-
նելու... (Գալիս է էմմա):

ՏԵՍԻԼ 3.

ԲՕԶԱԼԻԱ, ԷՄՄԱ.

ԷՄՄԱ. Ժողովուրդ:

Բօղալիա, ի՞նչ է պատահել ձեզ:

ԲՕԶԱԼԻԱ.

Այինչ, սիրելի էմմա:

ԷՄՄԱ.

Այի՛նչ: Ծշմարիտն էք ասում... Ինձ թը-
ւում է, որ դուք այսօր անհամեմատ տխուր

էք և այդ ինձ դուր չէ գալիս— Դոնէ համ-
բուրեցէք ինձ. մի՞թէ արժանի չեմ ես: (Բօղալի-
ան համբուրում է նորան): Ախ, դուք արտասովոր՞մ
էք: Ինչո՞ւ համար էք լալիս: Ինչո՞ւ էք այդպէս
վերաս նայում: Ես գունատուած չե՞մ արդեօք:
Զլինի՞ կարծում էք, որ ես հիւանդ եմ:

ԲՕԶԱԼԻԱ.

Այ:

ԷՄՄԱ.

Ապա էլ ի՞նչ է... Այ, հայրս էլ սկսել է
շատ մտածել: Տանը քիչ է մնում, իսկ երբ
վերադառնում է՝ այնպէս տխուր է, լուռ է...
Աստուած իմ, ի՞նչ է պատահել նորան: Նա
ինձ վերայ է նեղանում: Ես նորան ցաւեցրել եմ:

ԲՕԶԱԼԻԱ.

Դուք, խեղճ, ինչո՞վ պէտք է ցաւեցնէիք:
ԷՄՄԱ.

Դուցէ դուք մի ինչ չարիքի՞ էք սպասում:
Օ, ատեցէք եթէ գիտէք. ատեցէ՛ք:

ԲՕԶԱԼԻԱ.

Չարիքի... չկարծեմ... խեղճ էմմա: Դուք
շա՞տ էք սիրում ձեր հօրը:

ԷՄՄԱ.

Ախ, բացադրել անգամ չեմ կարող թէ ես
ինչպէս եմ նորան սիրում: Յիշում էք երբ նա
ինձ ուղարկեց Նէապօլ ուսանելու.— շատ մը-
նացի ես այնտեղ: Ես չկարողացայ նորանից հե-

ուռ մնալ... լսեցէք ինձ, ես երբէք չեմ ամուսնանալ, ես չեմ կարողանում հասկանալ թէ ինչպէս աղջիկը թողնում է իւր ծնողներին և գնում այնպիսի մարդի, որին հազիւ է ճանաչում... Դրանք վատ աղջիկերք են: Ի՞նչ է պատահում ձեզ հետ Ռօզալիա: Ինչո՞ւ էք այդպէս... Մի՞թէ ես յիմար բան ասեցի:

ԲՈԶԱԼԻՄ

Ընդհակառակն, աղջիկս:

ԷՄՄԱ

Ախ, ինչպէս սիրում եմ ես այդ բառը, — ազջիկս: Քանի անգամ ես ձեզանից խնդրել եմ, որ ինձ այդպէս անուանէք, իսկ դուք միշտ մոռանում էք: Ախար, ինչի՞ համար: Լսեցէք ինձ, ինչ որ կասեմ: միայն թէ չկուուէք ինձ հետ: Մի անգամ, այսինքն ոչ թէ մի անգամ, այլ մի քանի անգամ ես տեսել եմ երազում, որ դուք և իմ պապան — մարդ ու կին էք և որ ես նստած եմ ձեր երկուսի մէջ տեղ, — և որ քան բազմաթիւ եմ ես... Առաւօտը զարթնում եմ, վազում եմ պապայիս կաբինէտը — նա նըստած մենակ, — և երկար, երկար ժամանակ ես լալիս եմ նորա կուրծքի վերայ: (Օգլախան աստի յո-զնոնի, զէ կարողանում մի բան արարան տել. բունն զբարոնիով արդում է նարն և ինչոյն փոխում է իւր սէնակը): Նա իմ մտոյց գնաց... բայց ի՞նչպէս նա գրկեց ինձ: Ախ, եթէ իրա-

գործուէին իմ երազներս: Բայց միայն երազ չէ. քանի անգամ ես հէնց մտածել եմ այդ մասին արթուն ժամանակս... Բայց մի՞թէ չի կարող պատահել: (Նսփո՛ւմ է և հասշմռելի մը քաշկո՛ւմ է երեսը յետեւի մը. հռնո՛ւմ է Կօրըպա՛րոն):

STUPL 4.

ԷՄՄԱ և ԿՈՐԻՆԴՈ

ԿՕՐՐԱՆՈՒ շրջան ԱԶ:

Բայց ս՛րբ է նա... նա ինձ չէ՞ ուղղում
տեսնել: (Մոռելով «նեւի պեռում» է Էմմային) Աղ-
ջիկ.Վ. գուցէ նա է... (Կամայ հօգնում է Էմմա-
յին և որպէս զի նորան լաւ նայել հարողանայ բռնում
է նորա յետէլ, Էմմայի ալիքը բռնաւ նպաստելով):

ԷՄՄԱ. Երեսնեց լեւի է Գեորգի Լ Լուիսեյան Գե-
 օրգանի է:

Յտար մարդ... Ո՞ր էք դուք: Ո՞ւմն էք
ուզում: Դուք պապայի՞ս էք կամեհում:

408870

Իսկ ո՞ր է ձեր պատճան:

١٥٥٥

Նա շատ լաւ մարդ է:

409957.0

Բայց, վերջապէս, ո՞վ է:

١٥٥٥.

Նա այստեղ ամենքին էլ մեծ բարիքներ է
անում. բժիշկ Սրրիգո Պալմիրիէ:

ԿՕՐՐԱԴՕ

Պալմիրի:

ԷՄՄԱ

Դուք ճանաչում էք նորան:

ԿՕՐՐԱԴՕ

Կուղէի՝ ծանօթանալ:

ԷՄՄԱ. աւելի հեռանալ:

Ուրեմն...

ԿՕՐՐԱԴՕ

Ուրեմն ինչ: (Մօտենալով նորան):

ԷՄՄԱ

Մի մօտեցէք ինձ:

ԿՕՐՐԱԴՕ

Ինչո՞ւ (Շարունակ նայում է Էմմային):

ԷՄՄԱ

Ախ, ձեր աչքերը, կարծես, անձող լինին—
մի՛ նայէք վերաս:

ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ, ինձ հարկաւոր է ձեզ վերայ նայել:

ԷՄՄԱ

Հարկաւոր է: (Ուղում է աւելի թաքիւ):

ԿՕՐՐԱԴՕ

Թողէ՛ք ինձ մի լաւ նայեմ ձեր երեսը: Ձեր
երեսում ես ուզում եմ իմ աղջկանս նմանու-
թիւնը գտնել:

ԷՄՄԱ

Դուք աղջիկ ունէք... հիմայ ես աւելի

քիչ եմ վախենում ձեզնից... հայրերը չար մար-
դիկ չեն կարող լինել:

ԿՕՐՐԱԴՕ

Այդ ուղի՛ղ է: Եւ ես աւելի բարի կլինէի,
եթէ իմ աղջիկս ինձ հետ լինէր:

ԷՄՄԱ

Դուք կորցրել էք նորան:

ԿՕՐՐԱԴՕ

Այո. բայց ես նորան կգտնեմ եթէ միայն
նա կենդանի է: Թող տուէք ձեզ վերայ նայել:
(Շարունակ նայում է նորա վերայ՝ լարւած ու լարու-
թեամբ): Ո՛չ, ես խելագար եմ. մտաբերելու հը-
նար չկայ: Ի՞նչպէս է ձեր անունը:

ԷՄՄԱ

Էմմա:

ԿՕՐՐԱԴՕ

Էմմա:

ԷՄՄԱ

Միթէ դուք այդ անունը չէ՞ք հաւանում:
ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ. բայց աւելի լաւ կլինէր, որ ձեզ Ադա
անուանէին:

ԷՄՄԱ

Եւ ինչո՞ւ Ադա:

ԿՕՐՐԱԴՕ

Այդ իմ աղջկանս անունն է: Ձեզ ոչ ոք
այդպէս չէ անուանել:

ԷՄՄԱ.

Ոչ որ:

ԿՕՐՐԱԴՕ

Մինչև անգամ ձեր մայրն է՛լ:

ԷՄՄԱ.

Իմ մայրս երկնքումն է:

ԿՕՐՐԱԴՕ

Երկնքումն է... Նա բժշկի կինն է եղե՛լ:

ԷՄՄԱ.

Այո. և մեռել է ինձ ծնելու ժամանակ:

ԿՕՐՐԱԴՕ արտասովոր:

Խաբեբայութիւն: Ահա այն սարսափելի կասկածանքը: Ազան մեռած է. բժշկի օրինաւոր աղջիկը մեռած է... Ապա ս՛ա ում աղջիկն է... Բօզալիայի՛: Համբուրեմ ես սորան, թէ... (Մօպէսան է Էմմային):

ԷՄՄԱ. վախեցած:

Դուք ինձ վախեցնում էք:

ԿՕՐՐԱԴՕ

Ոչ, որդեակ իմ, մի՛ վախենաք:

ԷՄՄԱ.

Բայց ինչպէս զարհուրելի աչքեր ունէք դուք:

ԿՕՐՐԱԴՕ

Միշտ զարհուրելի չեն նորա. նոցա մէջ լինում է և սէ՛ր, լինում են և արտասուք, — շատ արտասուեքներ, — դա՛ռն արտասուեքներ: Նայեցէք ինձի:

ԷՄՄԱ.

Երբ որ դուք քնքշաբար էք խօսում: Ես ձեզանից աւելի շատ եմ վախենում:

ԿՕՐՐԱԴՕ

Մի՛շտ վախ և երկիւղ: Դուք ինքներդ ասեցիք, որ հայրը չար չի կարող լինել... Ուրեմն ես ձեզ Ադա կ'կանչեմ, և դուք ինձ հայր անուանեցէք: (Մօպէսան է):

ԷՄՄԱ. զարմացած:

Դո՛ւք, իմ հայրս:

ԿՕՐՐԱԴՕ արտասովոր:

Իսկ եթէ ե՛ս չեմ... այն ժամանակ վա՛յ ձեզ: Վա՛յ ձեզ:

ԷՄՄԱ.

Ախ, Աստուած իմ, օգնեցէք, օգնեցէք: (Մօպէսան է Բօզալիան):

ՏԵՍԻԼ 5.

ՆՈՅՆՔ և ԲՕԶԱԼԻԱ

ԲՕԶԱԼԻԱ. շնորհակալ Կօրրային:

Ի՞նչ է պատահել ձեզ, Էմմա: (Տեսնելով Կօրրային, ճիշդ է արձանագործում արտասովոր. սեղմում է Էմմային իւր կրծքին, յետոյ դուրս է գալիս նորան նայելու որից դուրս էր եկել և, վերադառնալով, հոգում է շեփում կանգնած և հալածող ասուած):

ԿՕՐՐԱԴՕ

Բօզալիա: (Բօզալիան ծածկում է երեսը յետ-)

«էջի ԴԶ»)։ Ես ուրուական չեմ։ Ինչո՞ւ էք ինձ-
նից վախենում։ Դու չցանկացար ինքդ գալ ինձ
մօտ. ուրեմն պէտքէ պատրաստուէիր ինձ քեզ
մօտ ընդունելու։ Քո վարմունքը ինձ համար
անհասկանալի է։ Ես չեմ իմանում թէ ինչո՞ւ
վախեցար, — արգեօք ինձնից, թէ նորանից, որ
դու գտար ինձ այստեղ այն աղջկայ հետ, որին
ես մեր աղջիկն եմ կարծում։

ԲՕԶԱԼԻԱ

Աղայի՞ն։ Դու ցնորքի մէջ ես։ Նա քեզ
ասեց, որ իրան էմնա են անուանում։

ԿՕՐՐԱԴՕ

Ասեց։

ԲՕԶԱԼԻԱ

Որ նա բժիշկ Պալմիրիի աղջիկն է։

ԿՕՐՐԱԴՕ

Ասեց. բայց դու հաստատո՞ւմ ես արգեօք։

ԲՕԶԱԼԻԱ

Հաստատում եմ։

ԿՕՐՐԱԴՕ

Աւելի վատ քեզ համար։ Նա բժիշկ Պալ-
միրիի աղջիկն է։ Բայց բժշկի միակ, օրինա-
ւոր աղջիկը վաղուց է մեռել։ Հիմայ ես քեզ
կ'հարցնեմ և դու ինձ կպատասխանես. ո՞վ է
ուրեմն այս աղջկայ մայրը, որին դու շտապե-
ցիր ազատել իմ նախանձից։

ԲՕԶԱԼԻԱ

Ո՞վ է նորա մայրը։ Զգիտեմ։ Ես վերջին
աղքատութեան մէջ էի, երբ ինձ վերառան նորա
մօտ դաստիարակելու համար և ես իրաւունք
չէի համարում ինձ՝ պահանջել նորա մետրիքա-
կան վկայականը։ Հարցրու նորա հօրից։

ԿՕՐՐԱԴՕ

Կհարցնեմ։ Հիմայ ուրիշ հարց. ո՞ւր է Ա-
դան։ Դու նրան ի՞նչ ես արել։

ԲՕԶԱԼԻԱ

Զարմանալի հարց։ Ես նորան ինչ եմ ա-
րել։ Նա մեռել է։

ԿՕՐՐԱԴՕ

Ադան մեռել է՞։

ԲՕԶԱԼԻԱ

Այո, մեռել է։ ամենքից, նախատուած, յան-
ցաւորի աղքատ կնոջը, չէր բաւականանում ըս-
տացած ողորմութիւնը իրան և աղջկանդ կերա-
կըրելու համար... և աղջիկդ չբաւորութիւնից՝
մեռաւ։

ԿՕՐՐԱԴՕ

Իմ Ադա... և այդպիսի անտարբերու-
թեամբ յայտնում ես նորա մահը։ Դո՛ւ։ Ի՞նչ։
Ո՞ւր է նորա մահուան վկայականը։

ԲՕԶԱԼԻԱ

Գնա կատանիա և այնտեղ հարցրու։ Ինձ-
նից դու իրաւունք չունես հաշիւ պահանջելու.
դու մեզ ձգել ես։

ԿՕՐՐԱԴՕ

Ես եմ ձեզ ձգել... Ես... էլ ինչո՞ւ համար էի ես 14 տարի ծռում և մարմինս և հոգիս շղթաների ծանրութեան տակ: Ինչո՞ւ համար էի ես տանում ծեծն ու հարուածները: Ի՞նչն էր պահպանում իմ կեանքս, եթէ ոչ քեզ տեսնելու, աղջկան տեսնելու յոյսը: Ել ինչո՞ւ համար էի խարտում և կոտրատում երկաթեայ վանդակները: Ինչո՞ւ համար, մահից չվախենալով, քարշ էի գալիս ձորերով և անտառներով, հազիւ շարժելով շղթաներից վիրաւորուած ոտներս: Ո՞ւր էի շտապում ես: Այն տունը ուր թողել եմ ես կնոջս: Ում էի փնդում ես: Բողալիային—իմ առաջին սիրոյս, միակ կնոջը, որին ես այնպիսի ջերմութեամբ սիրում էի,—և այն շատ կարճ ժամանակ: Ախ, ա՛յո, Բողալիային, որ կարողանամ ասել նորան. «տե՛ս, ի՞նչ տանջանքներ եմ կրել և ների՛ր ինձ»: Տե՛ս թէ ընչեր եմ կրել ես, որպէս զի կարողանայի ընկնել ոտներդ... (չե՛մ է նորա աւաջ): Մեծահոգի եղի՛ր Բողալիա... Բարձրացրու ինձ և ինձ հետ արի: ԲՕԶԱԼԻԱ

ԲՕԶԱԼԻԱ

Քեզ հետ: Ո՛չ, ես քեզ շատ եմ խղճում, բայց դու մեզ խղճացի՛ր արդեօք: Դու գիտէիր, որ քո աղջիկը հիւանդ էր, թոյլ էր, որ դու ունես կին, որը քեզ համար թողեց իւր

ծնողները և որը թողնուած է ամենքից: Դու չ'կամեցար խղճալ մեզ, չ'կամեցար սանձել քո կատաղի բնաւորութիւնը: Դու գիտէիր, որ մենք շնչում ենք միայն քեզանով, որ առանց քեզ մենք կ'կորչենք սովից, ամօթից և անարգանքից: Դու մեզ մոռացար և մոտերդում էիր միմիայն քո վրէժի մասին: Դու սպանեցիր իմ եղբայր...

ԿՕՐՐԱԴՕ Էսայ Բարձրաւարդ:

Մի արտասանիր այդ անունը... ամենադառն նախատինք է այդ, որ անդադար հոգուս մէջ հնչում է... Ալօնդօն ուղեցաւ ինձ զրկել ամենից և ես խլեցի նորանից ամենը... Այս յանցանք է... ոճիր է... բայց ես այդ յանցանքը անտանելի տանջանքներով քաւեցի:

ԲՕԶԱԼԻԱ

Դու կարծում ես: Զեմ վիճիլ քեզ հետ... Բայց յանցանքի խայտառակութիւնը յաւիտենական է, անջնջելի է, նա ժառանգէ ժառանգանցնում է անմեղ երեխաների վերայ: Բանդապետները, կապելով, ամրացնելով քո շղթաները, արձակեցին մեր ամուսնական կապերը...

ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ, Բողալիա, այդպէս չէ օրէնքը...

ԲՕԶԱԼԻԱ

Օրէնքը: Եւ միթէ ժամանակը օրէնք չէ: Միթէ սիրտը օրէնք չէ:

ԿՕՐՐԱԴՕ

Ուրեմն քո սրտիցդ հարցրու: Եթէ վախեցընում են քեզ, բամբասանքները, հասարակութեան նախապաշարմունքները, մենք կ'խաբենք հասարակութեանը: Իմ անունս խայտառակված է, ես կ'փոխեմ նորան... Մենք կ'գնանք, մենք կ'ծածկուենք հեռու, անծանօթ երկրներում: որտեղ միայն դու կ'ցանկաս...

ԲՕԶԱԼԻԱ

Կօրրագօ, յիշիր, մեզ բաժանում է երկու ուրուական. եղբօրս և մօրս. մայրս չ'կարողանալով դիմանալ եղբօրս մահուան—մեռած՝ անիծելով ինձ... Եւ յնայելով դորան եթէ դու, այն ժամանակ գայիր՝ ես քիչ հեռ կերթայի... Բայց 14 տարի՝ ժամանակը ունի իւր իրաւունքները... ճշմարտասէր եղիր ունէի ես հայրենական տուն. դու քարուքանդ արեցիր նորան. մի խլիր ինձնից և այս ապաստանը: Հեռացիր:

ԿՕՐՐԱԴՕ

Հեռանալ մի՞այն: Թողնել քեզ այս տանը: Անկարելի է: Եթէ դու վախենում ես այն դատակնիքից, որն ընկած է իմ անուան վերայ, ուրեմն պիտի վախենաս և այն նախատինքներից, որոնք կարող են ընկնել և քո անուան վերայ:

ԲՕԶԱԼԻԱ

Ինչ ես ասում դո՞ւ:

ԿՕՐՐԱԴՕ

Ես ասում եմ նորա համար, որի մասին ես մինչև այժմ լռում էի,—ես միշտ մխիթարում էի ինձ անիրագործուելի քաղցր երեակայութիւններով... ես փորձեցի քո սիրտը և գտայ ինձ համար փակուած և անմատչելի: Ես ասում եմ որ եթէ դու դարձեալ կ'յանդգնես և չես կամենալ ինձ հետեւիլ—ես ուղիղ որ կ'մտածեմ, որ ես մեռած եմ և որպէս ուրուական եկել եմ իմանալ, դուրս քաշել քո գաղտնիքները և խորտակել քո ուրախութիւնը, քո բաղգաւորութիւնը:

ԲՕԶԱԼԻԱ

Իմ ուրախութիւնս, իմ բաղգաւորութիւնս նրա:

ԿՕՐՐԱԴՕ

Ես կարծում եմ որ այս նոր տունը քեզ համար աւելի քաղցր է, քան քո հին տունը,—որ դու թագցնում ես սորա մէջ քո նոր սէրը, քո նոր աղջիկը:

ԲՕԶԱԼԻԱ

Շատ գեղեցիկ: Այգպէս կարծիր: Կարծիր ինչ որ կուզես: Ես արդէն հազար անգամ բամբասում եմ քո շնորհով: Ոչ ոք չէր հաւատում առաքինութիւնը ինքնիրէն մերժած մի կնոջ, որը խեղճ, միայնակ, ապրում էր առանց մարդի... Միացիր դու էլ այն բամբասաններին:

դու է՛լ մի բուռը ցեխ գցիր երեսիս—արա նոյ-
նը, ինչ որ անում են ուրիշները:

ԿՕՐՐԱԴՕ

Ես կամենում եմ լուսնալքեղնից այդ բամ-
բասանքը: Ի սէր Աստուծոյ, հետեւիր ինձ, քանի
որ չեմ հանդիպել ես այդ մարդու հետ. Ազա-
տիր ինձ... ազատի՛ր և նորան:

ԲՕԶԱԼԻԱ

Ի՜նչ. դու նոր յանդանքի վերայ ես մտա-
ծում:

ԿՕՐՐԱԴՕ

Ախ, Աստուած իմ: Ել ինչո՞ւ էք փչում, մե-
ծացնում այդ կրակը: Ինչո՞ւ էք զրգուում թու-
նաւոր օձը: Ես ո՞ճիր չեմ ուզում, ես ուզում
եմ սանձել ինձ, բայց իմ արիւնս ինձ չէ լը-
սում:.. (Յուսահատութեամբ): Բօղալիս, գնանք:

ԲՕԶԱԼԻԱ լախեցած:

Խղճա ինձ: (Դուռն մէջ ելեալ է Պալմիրին)
Ա՛խ. նա:

ՏԵՍԻԼ 6.

ՆՈՅՆԻ և ՊԱԼՄԻՐԻ

ԿՕՐՐԱԴՕ

Նա: Սա նա է: Պալմիրին:

ՊԱԼՄԻՐԻ

Ես եմ բայց դուք ով էք:

ԿՕՐՐԱԴՕ

Ամուսինը, որը պահանջում է իւր կնոջը:

ՊԱԼՄԻՐԻ լեբն ապիճանի պահպան:

Կօրրադօ:

ԿՕՐՐԱԴՕ

Կօրրադօն, որը պէտքէ գատի ձեզ եր-
կուսիդ:

ՊԱԼՄԻՐԻ առաջ:

Դատեցէք:



Վարդապետ:



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Տեսարանը նոյնն է:

ՏԵՍԻԼ 1.

ԿՕՐՐԱԴՕ և Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

ԿՕՐՐԱԴՕ նախաձեռնի հոգ:

Բարեկամ, կրկին անգամ խնդրում եմ ձեզ ինձ հանգիստ թողնել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ես ևս կրկին անգամ խնդրում եմ ձեզ, ձեր տեսութեան մասին մի բան գոնե ասել ինձ: Առաջինը այդ ինձ էլ է հետաքրքրում, երկրորդը ես կցանկայի հորեղբորս կամքը կատարել. նա ձեր պատասխանին անհամբեր ըստատում է:

ԿՕՐՐԱԴՕ

Մօնտինիօրը չափազանց անհանգիստ է, և չգիտեմ, թե ինչո՞ւ համար: Ի՞նչ պատասխան տամ: Ի՞նչ ասեմ, քանի որ ես ինքս ոչինչ չգիտեմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Դուք Բօզալիային չէ՞ք տեսել:

ԿՕՐՐԱԴՕ

Տեսել եմ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Եւ ի՞նչ էր նա ասում ձեզ:

ԿՕՐՐԱԴՕ

Շատ բան: Բայց հասկացայ միայն մեկը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Իսկապէս ի՞նչ:

ԿՕՐՐԱԴՕ ցոյց տալով «Երբը»:

Այդ այստեղ է, բարեկամ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Իսկ այդ տեղից չի՞ դուրս գալ:

ԿՕՐՐԱԴՕ

Ձի դուրս գալ մինչև չկտրատես սիրտս:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Եթէ այդպէս է ես չեմ համարձակիլ կրկին հարցնելու: Իսկ աղջիկը:

ԿՕՐՐԱԴՕ

Ո՞ւմ աղջիկը:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Հարցը հէնց դորանում է... Դուք նորան լաւ նայեցի՞ք:

ԿՕՐՐԱԴՕ

Այո:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ի՞նչ տպաւորութիւն արեց ձեզ վերայ:

ԿՕՐՐԱԴՕ

Միթէ կարելի՞ է հաղորդել տպաւորութիւնները: Ես ուզում էի նորան և համբուրել և սպանել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Միւսնոյն ժամանակ:

ԿՕՐՐԱԴՕ

Այո:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ուրեմն անթափանձելի մթուօթիւն է:

ԿՕՐՐԱԴՕ

Սարսափելի Բժշկից բացադրութիւն եմ սպասում: Իսկ նա այնքան էլ չէ շտապում: Ես սպասում եմ նորան սրտնեղութեամբ և ահ ու դողով: Մենք պիտի խօսենք նորա հետ այստեղ. ա՛յ, ինչու համար ես ձեզ խնդրում եմ գնաք. խնդրում եմ ձեզ երրորդ անգամ: մի՛ ստիպեցէք ինձ խնդրել և չորրորդ անգամ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Ձեմ ստիպիլ: Բայց ես կամենում եմ, որ դուք հանգիստ լինէք, որ կարողանաք լաւ մրտածել ձեր դրութեան, ձեր հանգամանքների մասին, որոնք շատ սուր կերպարանք կարող են ստանալ: Ես արգէն տեսայ մի քանի ձիաւոր ժանդարմների, որոնք երևի, եկել են, որ...

ԿՕՐՐԱԴՕ

Ինձ բռնելո՞ւ... Աւելի՛ լաւ... Ով որ արգէն ընտանիք չունի՝ նա կարող է և մեռնել: Ես ապրում էի իմ կնոջ և աղջկանս համար, հակառակ դէպքում միթէ ես չէ՞ի ջարդիլ գլուխս, բանդիս քարէ պատերին խփելով: Բայց լուխս, բանդիս քարէ պատերին խփելով: Բայց իմացէք որ ես ունեմ մի ուրիշ բան էլ, ամենագեղեցիկ միջոց. դեռ հիմայ էլ ունեմ... Ինձ

հարկաւոր է միայն մի քանի թուղենք, որպէս զի իմ գործերս կարգի բերեմ այս տանը, և յետոյ...

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այդ բոլորը կործես հանելուկներ են և սարսափելի հանելուկներ: Բայց մտածեցէք, որ ոչ մի դէպքում դուք իրաւունք չունէք ոչ պատժել և ոչ վրէժ հանել:

ԿՕՐՐԱԴՕ

Ո՞վ է ձեզ բան ասում, թէ դորա և թէ միւսի վերաբերութեամբ:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Հարկաւոր է խղճալ և Բօղալիային. չէ՞ որ ձեզ բաժանողը նա չէր: Միւսնոյն ժամանակ և կին է և այրի: Տասն և չորս տարի... Դուք ի՞նչպէս կվարվէիք, եթէ նորա տեղը լինէիք:

ԿՕՐՐԱԴՕ

Շատ հեշտ է դատողութիւններ անել նորա համար, որը չէ տանջւում: (Անհանգստութեամբ): Ինչո՞ւ չի գալիս նա: Ինչո՞ւ է այսքան ուշանում:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Նա կգայ. բայց վախենում եմ ձեր խօսակցութեան հետեւանքի մասին: Ինչ կլինէր նորա ճարը, եթէ յիմար աղնվութիւն բանացնէր և խոստովանուէր... Ախ, Աստուած իմ... Ի՞նչ կանէք այն ժամանակ:

ԿՕՐՐԱԴՕ

Միթէ ես գիտե՞մ, թէ ինչ է ասելու նա ինձ... Ինչ կանեմ ե՞ս... միթէ գնդակը, քանի որ չէ դուրս թռել հրացանից, գիտե՞ թէ ուր կդիպչի: Գնացէք ուրեմն. առաջ քան բժշկի հետ խօսելս՝ ինձ հարկաւոր է մտածել:

Դ. ՖԵՐՆԱՆԴՕ

Այդ ուղիղ է: Մտածեցէք և խորհեցէք ձեր խղճի հետ: Արիացէ՛ք, խեղճ բարեկամս: (Սէղմամ է նորա յետք և հնամ է):

ԿՕՐՐԱԴՕ

Ես իրաւունք չունեմ պատժելու, ապա ուրեմն և վրէժ հանելու... ես համաձայն եմ: Բողալիան, ձգուած ինձնով անդունդի եղերքը, առանց օգնութեան, թուլացած, կարող էր սօթ տալ, ընկնել... չեմ վիճում: Բողալիան ցանկանում էր իմ մահս, օրէց օր սպասում էր մահիս, ինչպէս մի ամենաքաղցր լուր, որ աղաալինէր, բաղդաւոր լինէր... և... բայց ինչո՞ւ չի գալիս բժիշկը. ինչո՞ւ է նա տանջում: Նորա երևի խորհում են՝ թէ ինչպէս խաբեն ինձ... Օ... վա՛յ նորանց, եթէ նրանք չխոստովանվեն... վա՛յ նորանց: (Տէնեւով Պալմէրէն) Ահա, վերջապէս, նա: Տէր Աստուած ողորմիր մեզ:

ՏԵՄԻԼ 2.

ԿՕՐՐԱԴՕ և ՊԱԼՄԻԵՐԻ

ՊԱԼՄԻԵՐԻ

Ներեցէք որ ստիպեցի ձեզ այսքան սպասել. բայց ինձ հարկաւոր էր պատրաստվելու այս անսպասելի խօսակցութեան համար և հանգիստ կերպով մտածել ամեն ինչ՝ ինչ որ պէտքէ ձեզ ասեմ:

ԿՕՐՐԱԴՕ

Ես այդպէս էլ կարծում էի:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ինձ համար այս հարցի վճիռը շատ հեշտ է: Ես չէի կարող այս հանգամանքում ինձ վերայ միայն յուսալ, ես պէտքէ յարմարուէի և ուրիշի կամքի հետ:

ԿՕՐՐԱԴՕ

Բողալիայի հե՞տ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Իսկ և իսկ: Ես այդպէս էլ արեցի: Ահա մեր երկուսիս վճիռը. մեղաւորուած մարդը պարտական է քաւել իւր յանցանքը, մինչև անգամ իւր սեփական կեանքի գնով:

ԿՕՐՐԱԴՕ

Այդ ձեր խոստովանութիւնն է:

ՊԱԼՄԻԵՐԻ

Դեռ ոչ: Ես խօսում եմ ձեր վերաբերութեամբ:

ԿՕՐՐԱԴՕ

Ի՞մա: Բայց ամենից առաջ, այնքան բարի եղէք, ցոյց տուեցէք ձեր աղջկայ մետրիքական վկայականը:

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Դուք պահանջում էք անկարելին. ես որդիք չունեմ:

ԿՕՐՐԱԴՕ

Որդիք չունէ՞ք. իսկ այդ աղջիկը:

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Այդ հրեշտակ — աղջիկը... Նա իրան էմմա է համարում: Նոյնպէս էլ ուրիշները... Նա Ա. դան է:

ԿՕՐՐԱԴՕ

Ա. դան:

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Ձեր աղջիկը:

ԿՕՐՐԱԴՕ

✓ Ա. դան կենդանի: Նա այստեղ է: Ես նորան տեսայ: (Հապ- հանգիստ է պահել լէրայ):

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Դուք ձեր ոյժերը կորցնում էք: Դուք դողում էք:

ԿՕՐՐԱԴՕ

Կայ այնպիսի ուրախութիւն, որից կարելի է մեռնել... բայց ես պէտքէ ապրեմ... հիմայ է որ ապրում եմ: Իմ Ա. դան այդպէս գեղեցիկ է:

Բայց ինչու համար նա ձեզ լւեր հայրն է հաշրվում: Ինչո՞ւ է սիրում: Դուք մի պատասխանեցէք. ես չեմ էլ ուզում իմանալ: Դուք նորան ինձ վերագարձնում էք և բաւական է: Իսկ մնացածը ես ձեզ ներում եմ, ներում եմ բոլորը... և բոլորին: Ես վաղու՜մ եմ նորա մօտ:

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Ապասեցէք:

ԿՕՐՐԱԴՕ

Ես ձեզ կրկնում եմ որ էլ ինձ ոչինչ հարկաւոր չի:

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Բայց ես պէտքէ իմանամ. արժէ՞ք արդեօք դուք Ա. դային:

ԿՕՐՐԱԴՕ

Եթէ չեմ արժեցել, ուրեմն կարժենամ:

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Յուսամ, կտեսնենք: Հանգստացէք և սառնասրտութեամբ լմաճեցէք նորա համար, ինչ որ ես ձեզ կասեմ. ես դեռ շատ քիչ եմ ասել ձեզ: Լաւ է, նստենք:

ԿՕՐՐԱԴՕ

Ասեցէք:

ՊԱՆՄԻՆԵՐԻ

Աւելորդ է պատմել թէ ինչպէս պատահեցանք մենք Բօզալիայի հետ: Այս եղաւ ձեր բանդարկութիւնից մի քանի ամիս յետոյ: Ես

ճանաչեցի նորան դառնութեան, վշտի, աղքատութեան և ծնողներէց թողնուած դրութեան մէջ: Այդ հանգամանքը ինձ տակն ու վեր արեց և ես վճռեցի օգնել նորան: Ես ինքս էլ զբաղուած եմ մէջ էի. ես կորցրի կիսն և էմմա աղջկայս. ես այն դրութեան մէջ չէի, որ մտածէի սիրոյ վերայ, բայց, խոստովանւում եմ՝ ձեզ, եթէ Ռոզալիան ազատ լինէր՝ ես նորան կ'առնէի, որպէս զի հասարակութեան մէջ դիրք տուած լինէի: Դժբաղդաբար նա կ'ապուած էր ձեզ հետ: Սաստիկ խղճալով նայում էի Ագայի վերայ. նա մի փոքր նմանում էր էմմայիս. — և օրէց օր մոտեմանում էր ինձ հետ, գուցէ նորա համար, որ ես գուրգուրում, սիրում էի նորան: Շուտով ես համոզուեցի, որ Ագան պատկանում էր այն տեսակ քնքոյշ, հիւանդոտ, ջղային բնաւորութիւններին, որոնց համար ամեն մի սաստիկ տպաւորութիւնը, և ուրախութիւնը, և վիշտը հաւասար կորստաբեր են: Ես մտածում էի. «դորմելի երեխայ, երբ կ'մեծանաս, դու կ'հարցնես քո հօր մասին. ի՞նչ պէտքէ պատասխանի քեզ քո մայրդ. ինչ կ'ասեն քեզ օտարները, աւագ, մշտական մտածմունքը կ'փչացնի քո ամեն մի ուրախութիւնը, ամեն զգացմունքը, կ'կտրի քո քունը, իսկ յետոյ, երբ որ քո սիրտը սէր կ'ընդունի, ո՞վ կ'պատասխանի քեզ սիրով... ո՞վ իւր անունը կը հա-

մաձայնի տալ ոճրագործի աղջկան»... Ես ըսկսեցի մտածել թէ ինչպէս օգնեմ ես նորան և մի օր ասեցի Ռոզալիային. դուք, բարի մայր, եթէ կ'կամենաք՝ ես հասարակութեան կստիպեմ յարգել ձեզ, եթէ ես չեմ կարողանում ձեր դիրքը բարձրացնել, ես կ'արող եմ այդ անել ձեր աղջկայ համար. — կ'արող եմ տալ նորան անբիծ անուն, — իմ անունս: Ես կ'կարծեմ որ իմ աղջկայ մեռած չէ և ձեր Ագայի մէջ կ'գրկէի իմ էմմայիս: Այդպէս էլ եղաւ, — հիմայ գատեցէք ինձ:

ԿՕՐՐԱԴՕ

Անկասկած այդ բոլորը ազնւութիւն է... նամանաւանդ այն դէպքում, երբ դուք չէիք սպասում վարձատրութեան...

ՊԱԼՄԻԵՐԻ

Սպասում էի ձեզնից: +

ԿՕՐՐԱԴՕ

Ինձնից: Բայց կ'ասեմ, որ բարի գործը կորցրնում է իւր ամբողջ գինը, երբ խորտակւում է ուրիշի իրաւունքը, սինիօ՛ր: Այդ աղջկը հայր ունէր:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ներեցէք. ես բոլորովին այդ բանում չեմ կարող համոզուել. ես զանազանութիւն չեմ գտնում յաւիտենական բանդարկութեան և գերեզմանի մէջ: Բայց և այնպէս եթէ ես ուրիշի

իրաւունքը խորտակեցի—բարի նպատակով միայն, եթէ ես յանցանք գործեցի՝ դա դարձեալ ազնիւ ուղղութեամբ միայն:

ԿՕՐՐԱԴՕ

Որն էլ դուք պէտքէ քաւէք, ինչպէս ինքըներդ ասեցիք:

ՊԱԼՄԻԵՐԻ

Իմ խօսքերս ձեր յանցանքներին էին վերաբերում, որոնք աւելի մեծ էին քան իմս.—որոնց քաւելը ձեր պարտքն է: Բողալիան ձեր զոհըն է. նաամենաբարձր հաստատամտութեան օրինակ է ձեզ ցոյց տալիս: Որպէս զի խաբէութիւնը ծածկուէր, Բողալիան պէտքէ հրաժարուէր մայրական ուրախութիւններից և իրաւունքներից:

ԿՕՐՐԱԴՕ

Բողալիան հրաժարուել է: Բայց դուք հասկանում էք, որ ես չեմ կարող և չեմ կամենում հրաժարուել:

ՊԱԼՄԻԵՐԻ

Դուք կհրաժարուէք. այդ անհրաժեշտ է:

ԿՕՐՐԱԴՕ

Անհրաժեշտ է:

ՊԱԼՄԻԵՐԻ

Անշուշտ: Ես չեմ իմանում, ինչպիսի բառեր կգտնէք, այդ քնքոյշ և վախկոտ արարածի հետ խօսելու համար: Ինչ կասէք դուք

նորան... »Այն ազնիւ մարդը, որին դու յարգում ես և այդպէս ջերմ կերպով սիրում—քո հայրը չէ, քո հայրը ես եմ... ես ուղանցի քո հարազատ մօր եղբօրդ.— ես մեկնում եմ դէպի քեզ այն ձեռքերը, որոնք վիրաւորուած են շղթաների կապանքներից.— ես ներուած չեմ ես փախոյ.— ամեն օր, ամեն ժամ ինձ կարող են բռնել և իսկոյն բանդարգել, ես եմ քո հայրը: Եթէ դու մեռնես խղճահարութիւնից, վրէտից ու տառապանքից, հոգ չէ ինձ, միայն թէ կարողանամ գրկել քեզ»:

ԿՕՐՐԱԴՕ

Օ... ի սէր Աստուծոյ, լռեցէք:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ես կլռեմ, միայն թէ ձեր սիրտը խօսէ:

ԿՕՐՐԱԴՕ

Դուք սիրտս քրքրեցիք և կամենում էք որ խօսէ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ուրեմն վերջացնէք մեր խօսակցութիւնը (Մօպէսան է դրան և նշանով հրաւիրում է Ռէնէ Նէրսիսը):

ԿՕՐՐԱԴՕ

Այդ ի՞նչ կնշանակի:

ՊԱԼՄԻԵՐԻ

Դուք կոտնէք: Ես իմ պարտքս կատարեցի.— կատարեցէք և ձերը: Դատեցէք, ողորմա-

ցէք, պատժեցէք, ամեն բան ինչ որ կցանկանաք: — Դուք կամենում էք քարուքանդ անել իմ ամբողջ աշխատանքս: Դուք դորա համար իրաւունք ունէք, ես չեմ կարող ձեզ հետ վիճել: Ես ճանաչում եմ ձեր իրաւունքները. դուք կարող էք սպանել ձեր ազնիւը: — Նայեցէք. նա գալիս է. խեղճ, մեծահոգի մայրը նորան բերում է ձեր դատաստանին:

ԿՕՐՐԱԴՕ

Ախ: (Ծածկում է յետեւում ելելու):

ՊԱՆՄԻՆԻ

Հաստատ եղէք: Մէկ խօսքով, դուք կարող էք երկու սիրտ սպանել:

ԿՕՐՐԱԴՕ

Ի՞նչ տանջանք է, Աստուած իմ: (Գալիս է Բեզուխան և Էմման):

ՏԵՍԻԼ 3.

ՆՈՅՆՔ և ՐՕԶԱԼԻԱ և ԷՄՄԱ

ԷՄՄԱ. Էմման, Կորնելի, լալում է ուղիղ (Պալիւրիէ Ժոյ):

Վերջապէս ես քեզ գտայ, վատ պապա: Ես մի րոպէ անգամ չեմ կարողանում առանց քեզ մնալ և շատ ուրախացայ, երբ Բոզալիան կանչեց ինձ քո մօտ: Գոնէ մի փոքր չե՞ս գուրգուրիլ ինձ:

ՊԱՆՄԻՆԻ

Ես պետքէ մի բան ասեմ քեզ... բայց ես

այս մարդի հետ խօսքով ընկայ...

ԷՄՄԱ. Կեանքով Կորնելի, լալում է:

Աս դարձեալ այստեղ է:

ՊԱՆՄԻՆԻ

Միթէ դու սորանից վախենում ես:

ԷՄՄԱ

Շատ եմ վախենում: Ես արդէն մի անգամ սորան տեսել եմ և Բոզալիան հաղիւ ինձ ազատեց սորանից:

ԿՕՐՐԱԴՕ

Իսկ այն ժամանակ ես... (Բեզուխան Կորնելիի աչքի տակ հեռացնում):

ԷՄՄԱ

Ես ձեզ այն ժամանակ ի՞նչ էի արել: Երեւակայի պապա, սա ասում էր, որ իմ անունը սկսեց լինել ոչ թէ Էմմա, այլ Ադա...

ՊԱՆՄԻՆԻ

Որովհետեւ... (Նկատելով Բեզուխանի հայեացքը, լալում է):

ԷՄՄԱ

Որովհետեւ ձեր ազնիւան այդպէս են անվանում, միթէ ամեն մի ազնիւ անուն Ադա պետքէ լինի... Ուղղում էր գրկել ինձ, ուղղում էր որ ես նորան հայր անուանէի:

ՊԱՆՄԻՆԻ

Իսկ դու չե՞ս ուղղում, որ նա քո հայրը լինէր:

ԷՄՄԱ

Ես իսկպն կմեռնէի: Բայց, ախար, դու ես
իմ հայրս: (Ճշտով և զորով երկնային): Դո՛ւ,
այդ ուղի՛ղ է: Ոչ ինձ մի թողնիլ: Ես միշտ
քեզ հետ կմնամ միշտ: (Ձեռքերով փախախտած է
նորա լիւը:

ՊԱԼՄԻԵՐԻ ԴՆԵՆԴՅԵՐԷ ԵՏՈՅԻ ԳԼԻՆ:

Միշտ և միշտ:

ԷՄՄԱ

Միշտ... Ախ ինչ լաւ կլինի: Բայց այս-
տեղից գնանք. իմ սիրտս ցաւում է, երբ այս
մարդին տեսնում եմ:.. գնանք, դու ինձ մի
բան էիր ուզում ասել:

ՊԱԼՄԻԵՐԻ

Գնա կաբինէտի... ես իսկոյն կգամ:

ԷՄՄԱ

Մի ստիպիր ինձ սպասելու: (Գնում է):

ՊԱԼՄԻԵՐԻ ԿՅՐԵԱԿՅՐԷՆ:

Լաւ մտածեցէք թէ ինչ տեսաք և թէ ինչ
լսեցիք: (Գնում է լռութեամբ):

ԲՕԶԱԼԻԱ

Կօրրագօ, դու ինձ ոչի՞նչ չունես ասելու:

ԿՕՐՐԱԴՕ

Շատ:—Բայց ինձ հրամայած է լաւ մտա-
ծել տեսածիս և լսածիս համար. մի մարդ, որ
նոյն մարմինն ու արիւնն ունի ինչպէս ես, նոյն
սէքն ու բուռն ցանկութիւններն ունի ինչպէս ես,

հրամայում է մտածել ինձ: Հրամայում է
իմ սրտիս լուել, երբ նա հեկեկում է, հեծում
է և հրամայում է նորան խօսել, երբ նա ար-
գէն մեռած է: Այո՛, ես տեսայ և լսեցի: Ես
տեսայ իմ աղջիկս գեղեցիկ, սրբա-հրեշտակ,
իմ աղջիկս, որը վախենում է, առում է ինձ,
չճանաչելով ինձ և չնկատելով, որ ես միմիայն նո-
րանով եմ շնչում: Իմ աղջիկս ուրիշին է սի-
րում, փայփայում, համբուրում... և դու նորան
այդ թոյլ ես տուել: Փոխանակ սովորեցնելու
նորան, իմ անբաղդութեանս համար, լաց լինե-
լու, աղօթելու ողորմելի բանգարկեալիս հա-
մար, դու մոցրել ես նորա սրտի մէջ կեղծ,
սուտ զգացմունք, որը հակառակ է բնութեա-
նը և օրէնքին:

ԲՕԶԱԼԻԱ

Կօրրագօ, ես կարծում էի, թէ իրաւունք
ունեմ վերագարձնել նորան այն, ինչ դու խը-
լել ես նորանից—բարի հայր և ազնիւ անուն:

ԿՕՐՐԱԴՕ

Բարի հայր... բայց ես պէտքէ զարմանամ
նորա համար, թէ ի՞նչ ես արել դո՛ւ, թէ ինչ
է արել Արրիգօն... բայց մարդուս խելքը այս
կերպ է դատում, իսկ սիրտը՝ ուրիշ կերպ: Կան
այնպիսի պատիժներ, որոնք գերազանցում են
յանցանքի ամեն չափը, անպատվում են մարդ-
կութեանը: Կարելի՞ է արգեօք հրամայել հօրը,

այսքան տարուայ անջատումից յետոյ, որը հանգիպել է իւր աղջկան, անտարբէր լինել, համար լինել: Ես քար չեմ... Ես լռեցի, քարացայ... բայց արիւնս դարձեալ գլուխս է խրում... հիմայ ես զգում եմ և վիշտ, և նախանձ. սարսափելի նախանձ: Տո՛ւր — տո՛ւր ինձ իմ աղջիկս: ԲՕԶԱԼԻԱ.

Միթէ չլսեցիր: Քո աղջիկը կմեռնի: ԿՕՐՐԱԴՕ

Զի մեռնիլ: Ես նորան կպատմեմ իմ տանջանքներս, իմ վիշտս, իմ սրտիս խայթոցները: Եթէ նա բարի է. նա կհամաձայնի իմ միւթաւորիչ հրեշտակս լինել: Այո՛, ինձ հարկաւոր է, որ մաքո՛ւր, սպիտակ ձեռք շփէր իմ երեսը, զովացնէր, նորոգէր իմ արիւնս, որ նա առաջնորդէր ինձ և անկումից պահպանէր: Թող այս լինի միայն մի անգամ: միայն թոյլ տուեցէք կուրծքիս սեղմել... մեր Ագային, — յետոյ ես կփախչեմ: ԲՕԶԱԼԻԱ.

Միայն մի անգամ: Բայց յետոյ ինչ կլինի նորա հետ, Ագայի՛: Ախ Կօրրադօ, անկարելի է: Դու ինձ ասում ես քո սարսափելի տանջանքներիդ մասին — ես այդ տեսնում եմ, — զգում եմ: բայց չես տեսնում և չես զգում դու իմ տանջանքներս: Դու ուզում ես յայտնել մեր Ագային, որ դո՛ւ ես նորա հայրը: Բայց նորան ասե՛լ եմ արդեօք, թէ ես եմ նորա մայրը: Որ-

պէս զի փախչեմ ես նորա հարցերից. «Ո՛վ եմ ես. ինչ եմ արել. ո՞ւր է հայրը». ես զրկեցի ինձ մայրական իրաւունքներից և ուրախութիւններից և վեր առայ ինձ վերայ դաստիարակչուհու, դայեակի, աղախնոյ պաշտօնը... Շատ անգամ գիշերային հանդարտութեան ժամանակ, ես ծածկաբար մօտենում էի նորա անկողնին, որ նայէի նորա վերայ մայրական աչքերով. ես նորան երկիւղով էի համբուրում և իսկոյն փախչում էի նորանից, իմ ականջներում շարունակ հնչում էին հասարակութեան աղաղակները... Եւ Կատանիայում, և այստեղ, և ամեն տեղ ինձ անկաճ կի՛ն եմ համարում: ԿՕՐՐԱԴՕ ՎԵՐ ԼՈՒԷԼԷ:

Քե՛զ... Եւ այդ բոլորը իմ պատճառով: ԲՕԶԱԼԻԱ.

Լաւ է որ դու այդ հասկանում ես. հասկացի՛ր ուրեմն, որ դու չպէտքէ ինձանից խրլես այն, որ այսպիսի ինքնուրացութիւն է պատճառել ինձ: Ո՛չ, դու չես զրկիլ քո աղջիկը այն յարմարութիւններից, որոնք այնքան հարկաւոր են նորա թոյլ կազմվածքի համար. չե՛ս կանչիլ նորան քեզ հետ բաժանելու անպատվութիւնը և ողորմութեամբ հաւաքած չոր հացը. չես տանիլ դու նորան լեպւնները, ուր ամեն բոպէ նա պիտի դողայ թէ՛ քո տեղը կգտնեն, կբռնեն, կսպանեն իւր սաների տակ... Ա՛խ, չէ, Կօրրա-

դօ, եթէ դու չես խուժ մօր աղաչանքները, չեն զգացնում քեզ կնոջ արտասուքները, գոնէ իղձա՛ գայեակին, որը պահպանե՛լ է քո աղջըկան: (Զոհմէ է առաջին):

ԿՕՐՐԱԴՕ

Դու չոգո՛ւմ ես: Իմ առաջին: Վեր կաց, Բօղալիա, վեր կաց:

ԲՕԶԱԼԻԱ Վերէնալ:

Դէ՛, լսիր Կօրրադօ. ահա՛ իմ վճիռս: Թող մեր Ադան միշտ էմմա մնայ և կենայ այս ազնիւ մարդու մօտ, որը իւր անունը տուել է նորան: Ինչ կվերաբերի ինձ. կինը ստրուկ է, — թող այդպէս էլ լինի. ես չեմ գանգատւում, — իսկ ես գնում եմ քեզ հետ սարերը, բանդը, գըլխատման բեմ, եթէ կամենում ես:

ԿՕՐՐԱԴՕ

Դու ինձ հետ կգնաս... Ինձ հետ:

ԲՕԶԱԼԻԱ

Միթէ դու չե՞ս կարօտում այն ձեռքը, որը շփէր քո երեսը, զովացներ քո արիւնը, որը քեզ առաջնորդէր և պահպանէր անկումից: — Ահա քեզ այն ձեռքը, որին փնդում ես, ահա, բռնիր սա քո՛նն է:

ԿՕՐՐԱԴՕ

Ես արժանի չեմ մօտենալ դորան:

ԲՕԶԱԼԻԱ

Խեղճ Կօրրադօ: Մէկ րոպէ գոնէ մոռա-

ցիր քո անցեալը... Հանգստացրու քո տանջված գլուխը իմ կուրծքիս վերայ: Արի ինձ մօտ, անբաղդ Կօրրադօ:

ԿՕՐՐԱԴՕ Գրէլէլ Բօղալիային:

Բօղալիա: Ի՜նչ երջանկութիւն:

ԲՕԶԱԼԻԱ

Ես քեզ ներեցի, ամեն ինչ ներեցի: Դու վճռեցի՞ր. այնպէս չէ՞:

ԿՕՐՐԱԴՕ

Այո, ես վճռեցի, էլ չեմ կարողանում դիմադրել քեզ. իմ երկաթեայ սիրտս հալուեց քո կուրծքի վերայ: (Մօռմէ է Մօռնիւնը):

ՏԵՍԻԼ 4.

ՆՈՅՆՔ և ՄՕՆՍԻՆԻՕՐ

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ներեցէք ինձ. երեւի չէ՞իք սպասում: Բայց, ինչպէս երեւում է, ես շատ բարի ժամանակ եկայ, որպէս զի մասնակից լինեմ ձեր խրատական քաղցր զրոյցին:

ԲՕԶԱԼԻԱ

Դուք եկաք ընդհատելու այդ զրոյցը... բայց մի փոքր ուշացաք. բոլոր խօսակցութիւնը բարեբաղդաբար վերջացած է և մենք ամեն բանում համաձայնեցինք: Այնպէս չէ՞, Կօրրադօ:

ԿՕՐՐԱԴՕ

Այո՛:

ԲՕԶԱԼԻԱ

Ուրախացէք, մօնսինիօր, և թոյլ տուեցէք
ինձ հեռանամ: (Գնա՛ւ է):

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դուք նորան ներեցի՞ք:

ԿՕՐՐԱԴՕ

Դուք, մօնսինիօր, սխալվում էք, նա՛ ինձ
ներեց:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Շատ գեղեցիկ. մեղքերի փոխադարձ թո-
ղութիւնը—քրիստոնէական գործ է: Բայց ես,
դրան ետեւում կանգնած, լսեցի, որովհետեւ ես
եկած էի մի փոքր շուտ և չկամեցայ խառնել
ձեր քաղցր խօսակցութիւնը,—որ ձեր Ագան
ապրում է այստեղ Էմմա անուան տակ:

ԿՕՐՐԱԴՕ

Ապրում է,—բայց ո՛չ ինձ համար:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ոչ ձեզ համար:

ԿՕՐՐԱԴՕ

Ես պէտքէ նորանից հրաժարվեմ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Պէտքէ հրաժարվէ՞ք... Զի՛ կարող լինել...
մարդերը և հայրերը չեն կորցնում իրանց իրա-
ւունքները:

ԿՕՐՐԱԴՕ

Կան հանգամանքներ, երբ կորցնում են:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես ձեզ հետ համաձայն չեմ:

ԿՕՐՐԱԴՕ

Հաւատում եմ: (Մտա՛նք էլ): Այստեղ, մի քա-
նի ժամկայ ընթացքում, հոգիս աւելի մաքրվեց,
քան բանդարկութեան տաան և չորս տարվայ
ընթացքում: Բանդում մռնչո՛ւմ էի, որպէս գա-
ղան, իսկ այստեղ լալիս էի, որպէս մարդ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ձեզ լացացնելու ոչ ոք իրաւունք չունէր.
ձեր ընտանիքը ձե՛զ է պատկանում: Անբա՛ղդ,
և դուք չէք հասկանում, որ ձեզանից ազատ-
վել են ուղում: Բժիշկը խլել է ձեզանից ձեր
հայրական իրաւունքը, կամենում է խլել և ձեր
ամուսնական իրաւունքը:

ԿՕՐՐԱԴՕ

Դուք ստո՛ւմ էք: Իսկ ձեզ չէր վայելիլ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ես ստո՞ւմ եմ:

ԿՕՐՐԱԴՕ

Այո, ստում էք: Զէ՞ որ դուք լսում էիք
դրան ետեւից. ինչպէս չլսեցիք, որ Բողալիան
վճռեց ինձ հետ գնալ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Նա կեղծում է, նա գիտէ, որ ոստիկան-
ները գտել են ձեր հետքերը և որ...

ԿՕՐՐԱԴՕ

Լուեցէ՛ք, իրաւո՛ւնք չունէք անպատիւիւ
ազնիւ կնոջը:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ազնիւ:

ԿՕՐՐԱԴՕ

Այո, աւելի քան ազնիւ—սո՛ւրբ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Ա... այդ դէպքում, մնում է ինձ խղճալ
ձեզ վերայ. ոստիկանութիւնը գտել է ձեզ և
ես զգուշացնում եմ, որ իմ դռներս ձեզ հա-
մար փակված են:

ԿՕՐՐԱԴՕ

Ես կարծում եմ մինչև անգամ, որ դուք
էք մատնել ինձ:

ՄՕՆՍԻՆԻՕՐ

Դուք չհամարձակուէք իմ մասին կասկա-
ծելու:

ԿՕՐՐԱԴՕ

Իսկ դուք չհամարձակուէք ուրանալ: Դը-
նացէք, մօնսինիօր, ասեցէք նորանց, որոնք ինձ
փնդուում են, որ ես այստեղ եմ, և սպասում
եմ նորանց: (Մօնսինիօրը հնո՛ւ է):

Վարդապետ:



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նոյն տեսարանը:

ՏԵՍԻԼ 1.

ԿՕՐՐԱԴՕ, յետոյ ՐՕԶԱԼԻԱ

ԿՕՐՐԱԴՕ

Ինչո՞ւ է ուշանում Րօզալիան: Իմ ըստէ-
ներս համարած են: Ախ, ահա և նա:

ՐՕԶԱԼԻԱ

Կօրրադօ, դու ուզում էիր ինձ հետ խօ-
սել.—ահա և ես: Ի՞նչ է, միթէ ժամանակն
է մեզ ճանապարհ ընկնելու:

ԿՕՐՐԱԴՕ

Դեռ ոչ. ես պէտքէ դեռ քեզ մի բան ա-
սեմ և մի քանի հարցմունք անեմ ես սաստիկ
յուզուած էի, շատ տաքացած էի և չկարողա-
ցայ խոհեմ կերպով մտածել.—հիմա ես աւելի
հանգիստ եմ: Րօզալիա, նստիր ինձ հետ: (Բօ-
լալիան նստում է նրա մօտ): Ասա ինձ. կարողա-
ցա՞յ պահպանել ես իմ խոստումն: Կարողանո՞ւմ
եմ արդեօք հպատակվել, լռել, համբերել:

ՐՕԶԱԼԻԱ

Այո՛, Կօրրադօ:

ԿՕՐՐԱԴՕ

Քո փայփայանքներից յետոյ, ինձ հետ գա-

լու քո խոստովանից յետոյ, ես պարտական էի
այդպէս անելու:

ԲՕԶԱԼԻԱ

Ես էլ կկատարեմ իմ խոստովան:

ԿՕՐՐԱԴՕ

Այո՛, բայց ո՞րպիտի զոհաբերութիւն պէտ-
քէ անես դու: Ասա՛ ինձ, հաւատա ինձ և վըս-
տահ եղիր իմ վերայ: Բողալիա, չի՞ կտրատվիլ
արդեօք քո սիրտը, երբ դու կթողնես այս աե-
ղերը, այս տունը:

ԲՕԶԱԼԻԱ

Այո, տո՛ւնը: Եւ դու հարցնո՛ւմ ես ինձա-
նից: Ո՞չ ապաքէն այստեղ ենք թողնում, դու-
ցէ և յաւիտեան, մեր Ագային:

ԿՕՐՐԱԴՕ

Գիտեմ:—բայց բացի մեր աղջիկը, չես ցա-
ւիլ արդեօք մի ուրիշի համար, թողնելով նո-
րան այստեղ:

ԲՕԶԱԼԻԱ

Ել ո՞ւմ համար:

ԿՕՐՐԱԴՕ

Ուղիղ պատասխանիր. նորա համար, որը
կմնայ այստեղ աղջկանդ հետ:

ԲՕԶԱԼԻԱ

Աղնիւ մարդ...

ԿՕՐՐԱԴՕ

Որին դու շատ բանով պարտական ես, ո-

րին դու յանձնել ես հայրական /բաւուհքս:
Բոլո՞րն ասեցի արդեօք:

ԲՕԶԱԼԻԱ

Կօրրագո՛, աւելի պարզ ասա:

ԿՕՐՐԱԴՕ

Աւելի պարզ դո՛ւ ասա. ի՞նչպէս էիր այս-
քան ժամանակ նորա մօտ կենում: սիրո՞ւմ էիր
արդեօք դու նորան, սիրո՞ւմ էր արդեօք նա՛
քեզ:

ԲՕԶԱԼԻԱ

Այդպիտի հարցեր...

ԿՕՐՐԱԴՕ

Եթէ ես իրաւունք չունեմ, հարկաւորու-
թիւն գոնէ ունեմ այդ բոլորը իմանալու: Բօ-
ղալիա, վստահութեամբ խոստովանիլ ինձ, ես
ինքս էլ մեղաւոր մարդ եմ և միւսնոյն ժամա-
նակ քո բարեկամն եմ և պատրաստ եմ ներե-
լու քեզ:

ԲՕԶԱԼԻԱ

Թող բարեկամս ինձ գատի, թող մարդս ինձ
մեղադրի եթէ ես արժանի եմ դորան: Դու կի-
մանաս այն, ինչ բացի ինձնից ոչ ոք չգիտէ աշ-
խարհումս: Դու գիտես Արրիգոյին, գիտես նո-
րա աղնուութիւնը, նորա մեծ ոգութիւնը. դու
լաւ գիտես թէ ինչ արեց նա աղջկանդ համար
և ինձ համար: Ես կաւելցնեմ միայն, որ աղա-
տեց նա ինձ սարսափելի հրէշից, որը աղքա-

տութիւնից անկման է հասցնում: Այդ պատ-
ճառով էլ իմ շնորհակալութիւնս պաշտելուն
է հասնում: Եւ ճշմարիտ, միայն Աստուած կա-
րող էր ուղարկել ինձ համար այդպիսի պահ-
պանիչ հրեշտակի: Ես սկսեցի հանգիստ ապ-
րել, անվրդով, աներկիւղ և առանց խղճի խայ-
թոց զգալու. բայց իմ հանգստութիւնս վրը-
դովուեց, երբ սկսեցի նկատել, որ իմ զգաց-
մունքս դէպի նա փոփոխուում է. իսկ երբ ես նը-
կատեցի՝ փոփոխութիւնը կատարված էր արդէն:
Ես սկսեցի ինքս ինձ հետեւել... և յաղթեցի:

ԿՕՐՐԱԳՕ

Իսկ նա՞:

ՐՕՁԱԼԻԱ

Ինձ թւում էր, որ նա էլ էր տանջվում
ինչպէս ես: Ես այսպէս կարծում եմ նորա հա-
մար, որ թէև մեր աչքերը մեզ դաւաճանում
էին, բայց մեր ձայները, հնչիւնները սառչում
մեռնում էին մեր շրթունքների վերայ: Շարու-
նակ այսպիսի յարաբերութեանց, այսպիսի կռիւի
մէջ և մենք ապրում էինք: Կօրրագօ, երգվում
եմ քեզ այս բանում: Մենք չուզեցանք արգա-
րացնել բամբասանքները, որպէս զի նորանց ա-
ռաջ մեր աչքերը ցած չգցէինք: Բայց եթէ այս
իմ անհանգստութեանց վերայ, այն տանջանք-
ների վերայ, որոնց ես կրել եմ մինչև հիմայ,
ինչպէս մայր—կաւելացնես այս մշտական գեր-

մարդկային կռիւը, դու կհասկանաս թէ ինչ-
պէս էր իմ կեանքս այս տասն և չորս տարվայ
ընթացքում և թէ ի՞նչպէս էի դիմանում այդ
անվերջ փորձութիւններին, անճանաչ բարեգոր-
ծութիւններին, բամբասանքներին և ինքնու-
րացութեան: Ահա խոստովանվեցի ես քեզ և
սպասում եմ քո վճռին:

ԿՕՐՐԱԳՕ

Դու ինձ չասեցիր բոլորը:

ՐՕՁԱԼԻԱ

Բոլորը, Կօրրագօ:

ԿՕՐՐԱԳՕ

Ոչ: Դու ահա թէ ինչ չասեցիր ինձ. քո
ներքին պատերազմի րոպէներում, քո թուլու-
թեան րոպէում մտքովդ չէ՞ր անցնում արդեօք,
որ շատ բնական է, իմ մահվան մասին:

ՐՕՁԱԼԻԱ

Քո մահվան մասին:

ԿՕՐՐԱԳՕ

Դու չէի՞ր մտածում: Չէ՞իր ցանկանում:
Չէ՞իր խնդրում Աստուածանից որպէս վարձ քո
բարեգործութեան:

ՐՕՁԱԼԻԱ

Երգվում եմ: Ես այն Ժամանակ չէի հա-
մարձակվիլ մեր աղջկայ երեսին նայելու...

ԿՕՐՐԱԳՕ

Իսկ, եթէ այդ պատահելու լինէր, միթէ

դու չէիր ամուսնանալ Արրիգոյի հետ:

ԲՕԶԱԼԻԱ

Կօրրադօ, անաղնուծիւն է այդ: Ի՞նչ պէս ես քեզ պատասխանեմ:

ԿՕՐՐԱԴՕ

Ինչո՞ւ չպատասխանել: Նոյնքան պարզամիտ եղիր որքան և Արրիգօն: Նա ինձ ասեց, եթէ դու ազատ լինէիր, նա կտար քեզ իւր անունը, որպէս զի բարձրացնէր քեզ հասարակական կարծիքի առաջ:

ԲՕԶԱԼԻԱ

Նա... Այդ բանը ես առաջին անգամն եմ լսում:

ԿՕՐՐԱԴՕ

Աւելի լաւ: Ես քեզ հարցնում եմ: Կրն՝ դունե՞ս արդեօք նորա անունը և նորա ձեռքը: Բօզալիա, ես հարցնում եմ ինչպէս բարեկամ պատասխանիր:

ԲՕԶԱԼԻԱ. Գլուխը կռնուի:

Այո՛:

ԿՕՐՐԱԴՕ

Եւ այդ բոլորից յետոյ՝ դու պատրաստ ես թողնել այս տունը և ինձ հետեւել:

ԲՕԶԱԼԻԱ

Ես արդէն քեզ ասեցի: Գնա՛նք:

ԿՕՐՐԱԴՕ

Իսկ եթէ մեր փախուստը այլ ևս անկա-

րելի չի՞նի: Իմ հետքս գտե՛լ են և գուցէ այս Ժամիս... այս իսկ թողէիս կգան ինձ տանելու...

ԲՕԶԱԼԻԱ

Ճշմարի՞տ է արդեօք, Կօրրադօ:

ԿՕՐՐԱԴՕ

Դիցուք թէ ճշմարիտ է... Ի՞նչ կանես դու:

ԲՕԶԱԼԻԱ

Ես կապրեմ՝ քո բանդի դիմաց, կամ վաճառեմ կամանեմ: աշխարհքը այնքան շատ էր բամբասում ինձ... Բայց ոչ: Մենք կազատուե՛նք, մենք միջոց կունենանք փախչելու... գիշերը մօտ է. փախչե՛նք. — իմ սիրտս զարթնել է. ես ուզում եմ քեզ հետ ապրել: Ես սիրում եմ քեզ, Կօրրադօ, սիրում եմ այնպէս, ինչպէս առաջ, առաջուանից է՛լ շատ:

ԿՕՐՐԱԴՕ

Դու ինձ սիրո՞ւմ ես: Ինձ սիրո՞ւմ ես: Ախ Բօզալիա, ի՞նչ երջանկուծիւն կորցրի ես:

ԲՕԶԱԼԻԱ

Մենք այդ երջանկուծիւնը դարձեալ կը գտնենք: Դարձեալ բաղդաւոր կլինենք...

ԿՕՐՐԱԴՕ

Բաղդաւո՞ր... Այո՛: Գնա՛, պատրաստուի՛ր, գիշերս մենք փախչում ենք: Թո՛ղ ինձ մենակ: Ես այնպէս յուզուած եմ, որ եթէ դու մէկ րո-

պէ էլ մնաս — ես կմեռնեմ:

ԲՕԶԱԼԻԱ.

Ուրեմն մնաս բարեալ, մինչև գիշեր,
խեղճ իմ Կօրրադօ: (Սէղմ—ճ է Զորա Յէռլ և
Քն—ճ է):

ԿՕՐՐԱԴՕ

Եւ գա՛րձեալ ես պէտքէ մեռնեմ: — բայց
կատարելով արգարութեան պարտքը: Խեղճ,
մեծահոգի կին: Որքան ցաւ և վիշտ եմ պատ-
ճառել նորան: Նա սիրում էր մի ամենաազնիւ
մարդու, որը նորան բարձրացրել է ցեխից, որի
մէջ ես եմ գցել նորան... բայց ես, դիակս,
խառնում էի նորանց, ես կանգնած էի նորանց
մէջ... բայց դիակը չի անյետանալ, ես կթա-
ղեմ նորան: (Հան—ճ է Դեղալիօնը) Միքանի կա-
թիլ այս մեղալիօնից, և բաւական է: Թշվառ
գահիճներ. դուք կրկին կամենում էք բանդի
գառը հացով կերակրել ինձ, որ այս երկու
սրտերի տանջանքները երկարացնէք... Ո՛չ, ես
կխմեմ... և կքնեմ: (Դադարէլ) Բայց իմ աղ-
ջիկս... է՛հ, ինչ արած: Ես զգուշանք եմ աղ-
դում նորա մէջ... Այս էլ լաւ է, նա լաց չի
լինի իմ մահուանս համար: (Մահ—ճ է Էմմա):
Ա՛խ, ահա նա: Ինքն Աստուած ուղարկեց սո-
րան:

ՏԵՍԻԼ 2.

ԷՄՄԱ և ԿՕՐՐԱԴՕ

ԷՄՄԱ.

Դարձեալ սա այստեղ է: (Ուղ—ճ է Քնալ):

ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ, մի՛ փախէք ինձանից. որքան հարկա-
ւոր է ինձ ձեզ հետ խօսել:

ԷՄՄԱ.

Ինձ հետ խօսել: Դուք հէնց ինձ հետ էք
ուղղում խօսել:

ԿՕՐՐԱԴՕ

Վերջին անգամ միայն:

ԷՄՄԱ.

Դուք գնում էք:

ԿՕՐՐԱԴՕ

Այո. վաղը ինձ չէք տեսնիլ. — դուք բաւա-
կան կլինէք:

ԷՄՄԱ.

Մի փոքր, որովհետեւ...

ԿՕՐՐԱԴՕ

Որովհետեւ ես ձեզ վախեցնում եմ... Ես
գիտեմ... բայց միթէ դուք իմ մէջ փոփոխու-
թիւն չէ՞ք տեսնում: Աւելի հանգարտ չե՞մ ար-
դեօք: Աւելի քնքոյշ չե՞մ արդեօք ձեզ հետ: Ե-
թէ դուք հիմայ էլ ինձանից վախենում էք, ես
ձեր առաջ կչոքեմ: (Չոք—ճ է):

ԷՄՄԱ

Ա՛խ, ոչ, այդ հարկաւոր չէ՛:

ԿՕՐՐԱԴՕ

Կամենում էք, որ ես վեր կենամ: Ես թոյլ եմ, օգնեցէք ինձ, տուեցէք ինձ ձեր ձեռքը:

ԷՄՄԱ. յեւթը Կալլի:

Ա՛խ, ողորմելի... (Նկատելով նորա յեւթերն շղթաների հետեւը): Այո ի՞նչ է: Ձեր ձեռքերը վնասուած են: Ա՛խ: Դուք է, Աստուած իմ... դուք շղթայակա՞յ էք եղած: (Կօրրաբօ նստած է աթոռի վերայ): Դուք դատապարտուած էք եղել: Ինչո՞ւ համար... ոչ, մի՛ ասէք: Եւ ինչու եմ հարցնում ես ձեզ: Մի՛ նեղանաք... Դուք լալիս էք... Ա՛խ, հիմայ, ես ձեզնից չեմ վախենում, իսկ ես ձեզ խղճում եմ... Դժբա՛ղդ... Եթէ հիմայ գտնէք դուք ձեր Ագային...

ԿՕՐՐԱԴՕ

Նս էլ չեմ գտնիլ նորան. նա մեռել է:

ԷՄՄԱ

Դուք ձեզ վա՞տ էք զգում: Աստուած իմ: Ի՛նչպէս սպրանեցիք: Ես ձեզ նեղութիւն պատճառեցի: Ես չէի ուզում ձեզ նեղացնել... Դուք շատ տանջւում էք. մարդ չկանչե՞մ արդեօք:

ԿՕՐՐԱԴՕ

Ո՛չ... Նայեցէ՛ք: (Յայտ է Կալլի Բեթլի): Այո մեղալիօնում մի գեղ կայ, որը ինձ կառողջացնի:

ԷՄՄԱ

Կարո՞ղ եմ ձեզ մի որեւէ բանով օգնել:

ԿՕՐՐԱԴՕ

Դո՞ւք: Օ՛հ, չէ... Եթէ դուք այդքան բարի էք, դարձէք այն կողմը և աղօթեցէք ինձ համար:

ԷՄՄԱ

Այո՛, ես ձեզ համար կաղօթեմ: (Դառնալով հակառակ կողմը, Ժպտած է յեւթերը: Այո Բեթլին Կօրրաբօն ծափեցնած է Բեթլիէնը շղթաներին, յետոյ, լռելով սեղանի վերայ, ծափեցնած է Բեթլին):

ԿՕՐՐԱԴՕ

Շնորհակալ եմ ձեզնից... հիմայ լաւ եմ զգում...

ԷՄՄԱ

Ես շատ ուրախ եմ, եթէ այդ ճշմարիտ է. ես ա՛յնպիսի զգացմունքով աղօթեցի ձեզ համար... տեսնում էք, ես լալիս եմ... Դուք կարծես թէ նորա համար էք եկել այստեղ, որ ըստիպէիք ամենքին լաց լինել:

ԿՕՐՐԱԴՕ

Ե՛ս:

ԷՄՄԱ

Այո, հայրս էլ, Բօզալիան էլ այնպէս արեւել են ձեր գալուց յետոյ:

ԿՕՐՐԱԴՕ

Բայց միևնոյն ժամանակ ես եկել եմ այս-

տեղնորա համար, որ ամենքին էլ բաղդաւորացը-
նեմ... որ ինձնից յետոյ ~~բէր~~ յիշողութիւն
թողնեմ:

ԷՄՄԱ

Դուք գն՝ւմ էք. ինչ որ զարմանալի է:
Ինձ թւում է իբր, Բօղալիան էլ է մտածել
գնալու, ինձ թողնելու:

ԿՕՐՐԱԴՕ

Նա ձեզ ասե՞լ է:

ԷՄՄԱ

Ո՛չ. բայց մի փոքր առաջ գրկեց ինձ և
լաց եղաւ. կարծես, մնաս բարեւ էր անում
ինձ հետ. կարծես պէտքէ շատ ժամանակով հե-
ռանար:

ԿՕՐՐԱԴՕ

Դուք սխալուել էք: Թողնել ձե՞զ: Ինչո՞ւ
համար: Իսկ դուք կցաւէիք նորա համար:

ԷՄՄԱ

Շատ, շատ կցաւէի:

ԿՕՐՐԱԴՕ

Ուրեմն դուք շա՞տ էք սիրում խեղճ Բօ-
ղալիային:

ԷՄՄԱ

Ինչպէս ծնող մայրս:

ԿՕՐՐԱԴՕ

Իսկ եթէ նա իսկապէս ձեր մայրը լինէր,
դուք կուրախանայի՞ք:

ԷՄՄԱ

Նա շատ կուրախանայի: Գիտէ՞ք, իմ սիրտս
կարծես ինձ ասում է, որ այդպիսի բաղդաւո-
րութիւն ինձ համար շատ կարելի բան է: Քա-
նի անգամ ես այդ տեսել եմ երազումս... Նա
մի անգամ երազումս տեսայ, որ հայրս և Բօղա-
լիան ծածուկ պսակուած են... ա՛յ ինչ:

ԿՕՐՐԱԴՕ հարաշելով:

Իսկ եթէ այն, ինչ տեսել էք երազում ճշ-
մարի՞տ լինի:

ԷՄՄԱ պարմայմամբ:

Ի՜նչ էք ասում, Կօրրադօ:

ԿՕՐՐԱԴՕ

Ահա ես ինչու համար եմ եկել այստեղ,
որդեակ իմ: Նա եկել եմ ասելու, որ անարդա-
րացի է այսպէս երկար ժամանակ ձեզ խտրելը,
որ իզուր էք ձեր աչքերը երկինք դարձնում
և վնդռում այնտեղ ձեր մօրը, քանի որ նա
այսպէս վաղուց ձեզ հետ ապրում է այս տան
մէջ...

ԷՄՄԱ

Բօղալիան...

ԿՕՐՐԱԴՕ

Այո. ահա այն յիշողութիւնը, որը ես ցան-
կացայ թողնել ինձանից յետոյ:

ԷՄՄԱ

Բօղալիան... իմ մայրս, Բայց կրկին երազ

չէ՞ արդեօք սա: Ախ, եթէ այդ ուղիղ լինէր,
շնորհակալ եմ ձեզնից, իմ բարեկամ Բայց ո՞ւր
է Ռօզալիան: Զի՞ զնացել արդեօք, չի՞ թողել
արդեօք ինձ: Ո՞ւր է Հայրս: (Վազմէ Է Դէպի Դուռը):
Ախ, եկէք այստեղ: (Մտնում է Պալիստին և
Ռօզալիան):

ՏԵՍԻԼ 3.

ՆՈՅՆՔ, ՊԱԼՄԻԵՐԻ և ՐՕԶԱԼԻԱ

ՐՕԶԱԼԻԱ

Ի՞նչ է, էմմա:

ՊԱԼՄԻԵՐԻ

Կօրրա՞դօ:

ԷՄՄԱ

Ասա ինձ (Պալիստին) ճշմարիտ է, ինչ որ
Կօրրադօն է ասում: Իմ մայրս մեռած չէ՞: (Րօ-
զալիան): Ասեցէք և դուք, հանեցէք սրտիցս
այդ փուշը: Դուք էք արդեօք, դու և արդեօք
իմ մայրս:

ՐՕԶԱԼԻԱ. սարսափած:

Ախ:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ինչպէ՞ս: Դուք նորան ասեցի՞ք:

ԿՕՐՐԱԴՕ

Հանգստացէ՛ք: Ես ասեցի նորան, որ ձեզ
միացնում են Ռօզալիայի հետ օրինաւոր կա-
պերը:

ՊԱԼՄԻԵՐԻ

Ի՞նչպէ՞ս:

ԿՕՐՐԱԴՕ

Ներեցէք, որ ես բաց արի ձեր գաղտնիքը:
Բայց ես պարտական էի այդպէս վարուելու
այս հանդիսաւոր ընկերում, երբ ձեր պսակման
արգելքը յաւիտեան անյետանում է:

ՐՕԶԱԼԻԱ. սարսափած:

Անյետանում է:

ՊԱԼՄԻԵՐԻ

Կօրրադօ, դուք ի՞նչ էք արել:

ԿՕՐՐԱԴՕ

Ես լաւ գատեցի այն՝ ինչ որ տեսայ և լը-
սեցի:

ՊԱԼՄԻԵՐԻ

Եթէ ես ձեզ հասկացայ, ես վախենում եմ...

ԿՕՐՐԱԴՕ

Եւ դուք դարձեալ վախենում էք, սիրելի
աղջիկս, ի՞նչ, ես ձեզ խաբեցի՞: (Բռնում է շու-
րա յետեւ): Գնանք, ես ձեզ միացնեմ ձեր մօր
հետ, և ես ուրախանամ ձեր վերայ...

ԷՄՄԱ

Երազս կատարվում է:

ՐՕԶԱԼԻԱ. դէմ և սարսափած:

Օ... իմ աղջիկս: (Կօրրադօն հաղեւ է հար-
դանում հանգնել, սարսափելով մօրենիւմ է ախարհի և
շարունակ): Կօրրա՞դօ:

ԷՄՄԱ

Նա լատ է զգում:

ՊԱԼՄԻԵՐԻ Ժողովուրդ Կորսապոլի:

Սա մեռնում է:

ԲՕԶԱԼԻԱ

Մեռնում է:

ԷՄՄԱ

Սպասեցէք: Ա՛յ, այն մեղալիօնում գեղ կայ,
սա նորանից խմեց, կրկին տուեցէք սորան:

ՊԱԼՄԻԵՐԻ Վերջինը և Կորսապոլի:

Այս թոյն է: Սա թոյն է ընդունել:

ԲՕԶԱԼԻԱ

Աստուած իմ:

ԷՄՄԱ

Թոյն է ընդունել:

ԲՕԶԱԼԻԱ

Շուտով... մի ճա՛ր:

ՊԱԼՄԻԵՐԻ

Եւ ո՛չ մի հնար... արդէն ո՛ւշ է:

ԿՕՐՐԱԴՕ

Ոչ մի հնար: (Ի՛նչ շնորհաւոր): Խեղճ կին,
ազնիւ մարդ... նոքա արժանի՛ են բազմաւո-
րութեան, վարձի... և կտանան այդ ինձնից:

ԲՕԶԱԼԻԱ

Ե՛ս եմ մղաւորը, ես իմ խոստովանութեան
ինքնասպանութեան պատճառ դարձաւ նորան...

ՊԱԼՄԻԵՐԻ

Այո՛... մեղ համար իւր կեանքը զոհեց:

ԿՕՐՐԱԴՕ շնորհաւոր:

Դուք ասում էք, որ եկել էք ինձ բռնե-
լու... Ա՛... մատնիչ... անպիտան... Անմիտ-
ներ, կենդանի դիակը կորցնում է իւր շարժ-
մունքները... Ե՛ս այստեղը հասցրի... Ա՛խ, Ա՛-
դա, Ա՛դա:

ԲՕԶԱԼԻԱ արհայելի:

Կանչում է աղջկան... (Էմմային): Նորան
թւում է որ դու իւր աղջիկն ես... մօտեցիր
նորան... հայր կանչիր նորան... այն ժամանակ
նա հանգիստ կմեռնի:

ԷՄՄԱ

Ախ, ուղիղ: (Մօրենիւմ է Կորսապոլի և դը-
նելով իւր յետք նորա սփռվելու): Հայր իմ, հայր,
նայիր քո Աղայի վերայ:

ԿՕՐՐԱԴՕ ի՛նչ արհայելի:

Ա՛դա: (Վեր է կենում, գլխով է նորան: Նը-
շանով կանչում է Պալմիերին և Բօլալիային, Կալիս և
նորանց Էմմային և ընկնելով աշտի վերայ): Ո՛չ, դու
Էմման ես: (Մօրենիւմ է: Բօլալիան և Էմման շուտով
հեռանալով իրանց դուռից):

Վարսապոյր:

— ԿՕԶԱԼԻԱ —

2779

24575

2013

